

Šowšan Šawaršanay

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Srvantsiants, Garegin (1840-1892). Šowšan Šawaršanay. 1875.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՀՈՒՇԱՆ
ՇԱԻԱՐՇԱՆԱՅ

ՀԱՐԱԳՐՆԱՑ

Գ. Վ.

ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ


Կ. ՊՕԼԻՍ

ՊԱՆՈՒՆ ԳՆԱԲՈՒՆ ԵՍՍՏ ԵՓԵՆՏԻ ԽԱՆ

1875

Handwritten signature


Handwritten signature



41424867

125

ՇՈՒՇԱՆ ՇԱԽԱՐՇԱՆԱՅ



ՇԱՐԱԳՐԵԱՅ

Գ. Վ.

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Handwritten signatures in Armenian script




ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՊԱՀՃԻ ԳԱԲՈՒ. ԷՍԱՏ ԷՓԵՆՏԻ ԽԱՆ

1875



2010.291648

ACQ 1993004885

Handwritten number 2472

Handwritten number 125

1948

1948

1948

1948



Haik AGABEKIAN

Paris 1979



ՄԱՀԱՐՁԱՆ

ՍԷՐՎԷՐԵԱՆՑ

ԲԱԳԴԻԿԻՆ

ՀԱՅՐ ՆԱՀԱՊԵՏ ՅԱԿՈՐ
ՄԱՅՐ ԱՆՈՅՇ ՏԻԿԻՆ
ԵՂԲԱՐՔ ՀԻՆՔ ՊԱՏՈՒԱԿԱՆՔ
ԵՒ ԱԶՆԻՒՔ

ՔՈՐՔ ՉՈՐՔ ԱՌԱՔԻՆԻՔ

ՔԵՌՈՐԴԵԱԿՔ ՇՆՈՐՀԱԼԻՔ
ԵՒ

ՆՈՐԱԲՈՂԲՈԶՆ Ի ՆՈՍԻՆ
ՔՐՔՄԱԾԱՂԻԿՆ ՄԱԶԵՐՈՎ
ՄԱՏԱՂԱՏԻՆ ՅՈՒՎԻԱՆԷ

—

ՎԱՆԱՏՈՒՔ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒՔ

Ս. ՀԱՅՐԻԿԻՆ
ԵՒ ԱՆՈՐ ՀՈԳԵՔՈՐ ԵՐԿԱՆՑ
ԶԱՒԱԿԻՆ

ԻՆԶ

ՄԵՐ ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ԾՐԵՐՈՒՆ

ԲԱՂԴԻԿՆ կրտսեր էր յեղբարսն .
պատանի վեշտասանամեայ . նոր կը
մրային անոր թուխ յօնքերուն հետ
թեւ թեւ մօրուաց երեսաց, ծիւ ծիւ
ընչացք ուրնգաց :

Շնորհալի էր , պարկեշտ, փարեղի
ամենից : Հաւասար իւր հօր կը յար-
գէր զՍ . Հայրիկն . հաւասար եղբարց
կը սիրէր նա զիս :

Ընտանի խանդաղատանաց և գըգ-
ուանաց գորովով սնած . փափուկ էր ,
քնքոյշ և հրեշտակի պէս անմեղ իւր
զգայիքով և հոգւով :

Նա պիս սիրեց Յովնաթանու սի-
րով , և ես անոր Դաւիթն եղայ . ա-
նոր մահը ողբացի :

Աչքովս անոր հոգեվարքը տեսայ ,
իբրեւ 'ի Քեղբուայ լերանց վերայ ին-
կած վիրաւոր , ինկած հիւանդագին ,
ինկած մահացեալ

« — Ո՛հ , ցաւ է ինձ 'ի վերայ քո ,
եղբայր իմ Բաղդիկ — » :

Վերջին խօսքներն ես եղայ անոր
• • • երբ կ'արտասուէին զինքն ծնօղք,
քորք և եղբարք 'ի գուճ եկեալ զմահ-
ճօքն, և ալ չբարբառեցաւ նա • • • :

«Աիրակի եկեղեցին պիտի գամ»
ասաց ինձ • օրը շաբաթ էր • և երկու-
շաբթին ընդ առաւօտն դադարով
բարձաւ, յեկեղեցին մուծաւ :

Ամբողջ Գուզկունճուղն լացաւ
զնա • կականարարձ կը հառաչէինք ա-
մենեքեանքս : Այնքան շնորհալի, այն-
քան սիրելի էր նա :

Կը փղձկիմ տակաւին, երբ զինքը
կը յիշեմ • և միշտ կը փղձկիմ, քան-
զի միշտ կը յիշեմ :

Աղէկտուր հեծեծանօք աղօթե-
ցինք վրան • մորմօքելով հեկեկացինք
անոր հողեհանդիստը, և արտասուօք
աւանդեցինք մարմինն 'ի հող տապա-
նին, հողեակն Հողւոյն Աստուծոյ :

Անոր տխուր շիրիմը կնքելէն 'ի վեր՝
ըննիցս բոլորեցաւ Լուսնակն • բայց չե-
ղաւ ինն վայրկեան, որ չյիշէի զնա •
չհառաչէի անոր յիշատակին համար :

Կակիծը մաշեցոյց անոր տառապա-
կիր մօր տիկին Ննուշեկին ծնելական
գորովով խորովեալ սրտիկը • տրորեց
ծերունի հօր խնամոտ աղիքը • թար-
շամեցոյց քուերց և եղբարց խանդա-
գին վարդագոյն զուարթ ականողիքը •
տակաւին կը սգան կ'ողբան իրենց
տարաբաղդիկն Բաղդիկ :

Իբրեւ 'ի սփոփանա մխիթարար
Ձեր վշտաց , իբրեւ դուզնաքեայ փո-
խարինի նշան Ձեր առ իս անկշիռ սի-
րոյ երախտեաց , ո' տուն Սէրվէրեանց,
ՇՈՒՇԱՆՍ կ'ընծայեմ ԲԱՂԴԻԿԻՆ յի-
շատակին :

Հայրենեաց առաքինեաց մահար-
ձանաց 'ի վերայ' անոր առաքինի ա-
նունն ալ դրոշմուած անեղծ թող
մնայ :

Մասիսի կողերէն տապանաքար մի ,
Շաւարշանայ հովիտէն Շուշան մի ,
Երասխի եղերքէն ուռենւոյ ոստ մի ,
Արմաւրի սօսիներէն սաղարթ մի ,
Եփրատի ափերէն աւազներ ,
Տղմուտէն տղմոտ հողերը ,

Վարագայ սարի Անթառամ ծա-
ղիկներէն փունջ մի, քաղած՝ մատերովս,
բարձած՝ թեւերովս, ցօղած՝ աչերովս,
կը բերեմ շինել զարդարել Բաղդի-
կին գերեզմանը :

Ի ՄԱՀ ՆՈՐԻՆ

Մերունւոյն աղիք խածանին .
Մընողին աղիք գալարին .
Խորշակն հարաւ 'ի ծաղիկդ ,
Թարշամեցար , ո՛հ , ԲԱՂԴԻԿ :

Աչնան օդ շնչեաց ժանտաժուպ .
Ցայգ այգուն շուշանդ խամրեցար .
Շնորհաց կոկոն նորափթիթ ,
Թօթափեցար , ա՛հ , ԲԱՂԴԻԿ :

Յովսէփայ տիպար պատանի .
Պատմուճանդ ծաղկեայ շնորհօք լի .
Արոյ զաւակ տան հօր քոյ ,
'ի հող իջեր , ո՛հ , ԲԱՂԴԻԿ :

Կայտուէիր զերթ ճագ եղնիկի ,
Ժպտէիր զուարթ երեսօք ,
Քորք և եղբարք , բարեկամք ,
Քեւ բերկրէին , ո՛հ , ԲԱՂԴԻԿ :

Ո՞ զքէն գոյժ տարցէ Յակորայ ,
Յակորայ հօր քո նահապետ .
Ո՞ ժուժեսցէ զքեզ յիշել ,
Եւ չկողկողել՝ վա՛հ ԲԱՂԴԻԿ :

Արուսեակ քան զքեզ չէր պայծառ .
Շողշողուն էր յոյս քոյդ կենաց .
Անկաւ արեւդ , շեւ ծագեալ .
Մահն ըստուեր աժ զքեւ ԲԱՂԴԻԿ :

Փոխանակ աւուրց երջանիկ ,
Զոր յուսայր մայր քո Անուշիկ .
Սուգ և թախիժ ճաշակէ ,
Զանձն և ըզքեզ լայ , ԲԱՂԴԻԿ :

Որ երկնեացն՝ ի ցաւս յարգանդին .
Որ բերկրէրն երբ դու ժպտէիր .
Մահ քո զմայր քո թալկացոյց ,
Մնչէ , շնչէ , Ա՛հ , վա՛հ , ԲԱՂԴԻԿ :

Աիրտն այրի այրւոյն էվթիկին ,
Նոյեմզարն այրեալն նոր այրի .
Կիզնուն կոյսն և միւսն Հռիփսիմէն ,
Ի սէր քո և մահ , վա՛հ ԲԱՂԴԻԿ :

Ձի՞ տըքնիս անքուն աչերով ,
Այտուցեալ կոպերդ յարտասուս .
Եղբայրասէրդ կարապետ ,
Ո՞ւր է եղբայրդ , ո՞ւր ԲԱՂԴԻԿ :

Դողդոջիւն ոտիւք և 'ի շունչ ,
Գաս այցել ցաւոց սիրելւոյդ .
Փղձկիս , սարսուիս , Մկրտիչ ,
Ոչ եւս շնչէ քոյդ ԲԱՂԴԻԿ :

Նըշանիդ սրտին լար , կլիթառ ,
Անշըշունչ կախին աղէբեկ .
Ձի թեւ կենաց , ո՛հ , հատաւ
Եղբօրդ . . . ոչ եւս է ԲԱՂԴԻԿ :

Որ նասիտդ , Գէորդ , անընթաց .
Բարձր հոգւովդ թեւես յամէն ուր .
Պակասեցաւ , ո՛հ , 'ի քէն ,
Կամակատարն քոյդ ԲԱՂԴԻԿ :


Լըռեցո՛ւ զսըրինգ , Գրիգորէ ,
Գոյժ հնչէ զանգակ տաճարին •
Խըփեալ զերեսս ափերովդ ,
Տիրան , Լացէք ԸԳԲԱՂԴԻԿ :

Այլ հերիք , Թողէք զարտասուս ,
Նա գընաց յերկինս առ Յիսուս •
Յերանելիսն եղեւ երջանիկ ,
Անմահացաւ , մեռեալ չէ ԲԱՂԴԻԿՆ :

1878 Մայիս 1
Կ • ՊՕԼԻՍ

Արուստայրեանց
Գ • Վ •





ՆԱԽԵՐԳԱՆՔ

« Այս են Հայոց խոստովանողք . . .
« 'ի սմա տեսցեն զքաջ նահատակսն ,
« որ կատարեցան սրով : 'ի սմա տես-
« ցեն և զսուրբ կապանս չարչարա-
« նացն » :

« Եւ յորժամ մարտիրոսք և
« խոստովանողք և կապեալք սո-
« վաւ տեսանին , սովաւ օրհնի աչ-
« խարհն ամենայն » :

« Մովաւ օրհնին և տղայք նոցա
« յաճումն » :

« Մովաւ զգաստանան երիտա-
« սարդք նոցա 'ի սրբութիւն » :

« Մովաւ համեստանան ծերք նո-
« ցա յիմաստութիւն » :

« Մովաւ ուսանին իշխանք նոցա
« զմարդասիրութիւն » :

« Մովսէս անկանի գուլթ յԱստու-
« ծոյ 'ի սիրտ թագաւորին՝ շինել և
« խաղաղութիւն առնել բոլոր աշ-
« խարհին » :

« Մովսէս եկեղեցիքն պարծին իբ-
« րեւ քաջ և կատարեալ զինուոր » :

« Մովսէս վկայարանքն զարդա-
« րին » :

« Մովսէս և վկայքն ցնծացեալ
« բերկրին » :

« Մովսէս և դաշտն ԱՒԱՐԱՅՐԻ
« պայծառացեալ ծաղկալից լինի ,
« ոչ յանձրեւաբեր ամպոց , այլ 'ի
« սուրբ և յարիւնաբուղիս վկայից
« ցանեալ և ցրուեալ սպիտակու-
« թիւնք սուրբ ոսկերաց . . . » :

« Մովսէս յիշեսցեն զհողեւոր
« գունդս պատերազմողացն , որ փո-
« խանակ մեր ետուն զանձինս 'ի
« մահ , և հեղին զարիւնս իւրեանց

« 'ի հաշտութիւն պատարագ Աս-
տուծոյ » :

« Սովաւ յիշին սուրբ քահանայքն
« որք խողխողեցան յօտարութեան ,
« և ցածուցին զսրտմտութիւն բար-
« կութեան թագաւորին » :

« Սովաւ թերեւս զի զմեր կա-
« պանս յիշեսցեն , և աղօթս առնե-
« լով խնդրեսցեն յԱստուծոյ, զի գե-
» ղեդարձ լիցի մեզ անդրէն 'ի
« հայրենի երկիրն մեր . . . » :

ԵՂԻՇԷ

Վասն իոսփոզանսպաշն Հայոց :

Թող պարծի Հայն իւր Հայու-
թեամբ . և ահա՛ իւր պարծանք :

Սքանչելեօք և զմայլմամբ կը
լնու մարդու հոգին , արտասանե-
լով այս տողերը , այս բառերը , այս
տառերը , որ հրեղէն են , հոգե-
ղէն են :

Ո՛ր վերայ պէտք է հիանալ :

Եղիշէի՞ն , որ զայն գրեր է .

Կապելո՞ց , որ զայն զգացեր են .

Թէ առ հասարակ հինգերորդ
դարու Հայո՞ց , որ զայս ամենայն
կրեր են :

Ո՞վ Հայք , անդուգական եմք մեք
յազգս : Իրաւ , անհնարին չարիք
և աւերք հասած են մեզ . բայց և
այդ փորձանաց մէջ այնպիսի դիւ-
ցազներ , այնպիսի՝ առաքիներ
ի հանդէս եկած են , որոց անմահ
անուները անմահ պահած են Հայ
անուն և Հայաստանը :

Խոցեալ նետիւք . վիրաւորեալ
սրով ողջ անձը արիւնազանգ է մեր
եկեղեցւոյն , մեր ազգին . մեր փառքն
եղած են շղթայք , դիակունք , գե-
րեղմանք . դոքա եղած են և մեր
կենաց պատճառք :

Հինգերորդ դարը Հայոց ազ-
գի վերածնութեան դարն է . ծանր
երկունք կրեց մեր մայր Հայաստա-

նը , մեր մայր եկեղեցին՝ այդ օրե-
րը , և առ ցաւս իւր սաստկագինս
ճշեց . բայց և այնպիսի զաւակներ
յարոյց , որոց մէն մի հոգին կ'ար-
ժէ մէն մի ազգ ամբողջ , ազգ ըն-
տիր , ազգ պատուական և ազնիւ :

Ո՛վ էր վարդան , Հայ մը՝ Պարս-
կին սպարապետ . Ղեւոնդ՝ գեղի
մը տէրտէր . Գարեգին՝ մանուկ
տղայ մը . Աբրահամ՝ ճգնաւոր մը .
Նախարարք՝ կապեալք . Տիկնայք՝
տկար կանայք . Քահանայք՝ պաշ-
տօնատարք . Ժողովուրդ՝ օտարին
հպատակք , քաղաքականք և գեղջ-
կականք առ հասարակ . բայց միա-
բան առաքինիք , հաւասարք մեծ .
հաւասար արիացեալք . հաւասար
անմահացեալք :

Եղիշէի պատմագիրքն է Հա-
յոց համար այն մատեանը , որ յետ
Աւետարանին է նոր Աւետարան .
'ի նա Հայ Քրիստոնեայները Քրիս-

տոսանման կը տեսնենք: Անդ Գեթ-
սեմանի պարտէզն է Աւարայրը . Չի-
թենեաց լեռը՝ Մասիս և Հայրենի
սարերը . Աղօթք, Տագնապ, Քըր-
տունք՝ ամէն վայրերը, Զօրայու-
ցիչ Հրեշտակ և Մահուան Բաժակը՝
միշտ առնթեր և առ ձեռն: Աշա-
կերտք սիրեցեալք, և Մատնիչ
Սկարիովտացիք՝ Սիւնեցիք: Հայոց
բոլոր բլուրները և փոսերը Գողգո-
թայ են և Գերեզման, ուր կը կա-
խուին կը կոխուին քաջաբար հեզա-
բար արդարները անմեղները, դնե-
լով իրենց կեանքը Աստուծոյ հա-
մար, բարեկամաց և եղբարց վրայ,
թողլով սիրելիները, տուները, գան-
ձերը և անձերը, խաչք բառնալու,
և խաչին ու խաչեցելոյն սիրոյն զոհ
լինելու համար . որոց ձայնը բարձ-
րաբարբառ կը քարոզէ մեզ ՚ի քա-
ջալերս՝ թէ «ՄԵՔ ՅԱՂԹԵՑԻՆՔ»:
Հրաշալի է արդարեւ մեռնելով

յաղթել . ի յնալով քաջալերել . մա-
հու անմահանալ . զոհուելով փրկել :

Ընթեռնուն թող Հայոց ծերե-
րը այդ մատեանք , և պիտի նորոգ-
ուի անոնց արեւը . ընթեռնուն թող
ծնողք , և ուսանին դաստիարակել
իրենց զաւակունքք այն հոգւով ,
զոր կը ներշնչէ այդ սուրբ գիրքը .
Ուսանին և 'ի գործ դնեն իրենց
ծնողական ընտանեկան մեծ պար-
տաւորութիւնը , ճանչնալով թէ՛ ե-
կեղեցւոյ շինութեան քարինքը ,
հայրենեաց արմատը , ազգութեան
անդաստանը ինքեանք են , ծնողք
և ընտանիք :

Ընթեռնուն թող . ընթեռնուն
այդ դարու Հայոց արիւնով ու
աւիւնով զուարթապարար սուրբ
վարդապետին գրչագ իրը՝ մեր խան-
գալից երիտասարդք , փափկասուն
հարսունք , մեր աշխոյժ պատանիք
ու վառ վառ օրիորդք , և թող ապ-

րիլ ուսանին , ապրիլ հայաբար :

Ընթեռնուն զայն թող՝ մեր մա-
միկն ու պապիկը . որ իրենց ծնգաց
վրայ կը հանգուցանեն , իրենց թե-
ւոց և լանջաց վրայ կը գգուեն ի-
րենց մատղաշ թոռները , մրմնջի-
լով անոնց փափուկ լսելեաց՝ Եղի-
շէի աղուական մրմունջները :

Այս մատեանը , որ օծուած է
Աստուծոյ հոգւով . յորում լի է ազ-
նիւն և բարին . սէրն և շնորհք . որ
երկինքն ու հայրենիքը ՚ի մի կը
ղանգէ . և իր ընթերցողները կը
բարձրացնէ կը թեւաւորէ , երջա-
նիկ և հրեղէնս կ'առնէ :

Այն ինչ գիականացած եմք մեք
այսօր , նա զմեզ կ'օգեւորէ , կը մի-
աւորէ , կը յարուցանէ :

Ահա անոր մէկ փշուրն էր գըր-
ուած քիս նախերգանքը :

Եղիշէի մշակած դարաստանէն
ծաղկաքաղ փունջ մի է սոյն տետ-

րակիս նիւթը . անոր մեղուական փե-
թակէն մատն մատն քաղած մեղրը .
զոր իբրեւ բոյր մթ և ճաշակ մթ ըն-
թերցասէր մանկտւոյն հայկազանց
կը հանեմ ընծայ . մասին մի և եթ
կրելիաց և զգացմանց մեր հարց
երանելիաց առնել հաղորդ . որոց
'ի շունչ և յողին ոգեխառնիլ ըզ-
ձանամ ամենայն Հայոց :

Տրամ պէտք է անուանել զայս
իմ դրական դուզնաքեայ գործս՝
թէ ողբերգութիւն , կամ այլ ինչ .
ինձ փոյթ չէ արուեստական անուն
մի տալ այսմ . քանզի և արուես-
տով չէ գրուած , ոչ ձեւոց և ոչ
ոճոյ ընտրութիւն ու խտրութիւն
է եղած : Դերք և դերասացք թե-
րի են և առանց կանոնի , նոյնպէս և
արարուածները . կապն և հանգոյցը
թոյլ են և բացէ բաց . սիրահարի
տեսարան երբէք չգար յանդիման :
Կրնայ անշուշտ լեզուին և բառերուն

ալ դատաստանը դատուիլ . և այլն :

Սակայն այս գրածս թատերա-
կան բեմական բան մը չէ , և զայն
'ի գիր առնողը հայոց կրօնաւոր մի
է , վարդապետ մի է :

Ասոր մէջ գործածուած անուններ-
ըը , ոճերը , և գաղափարները ընդ-
հանրապէս Ե . դարէն կ'առնուենք ,
նոյն դարու Հայոց պատկերը ներ-
կայացնելու համար :

Տալ շնչել շունչ մը մեր հայ-
րենեաց սիւքէն .

Տալ լսել արձագանք մը Հայաս-
տանի քարերէն և անձաւներէն .


Տալ հառաչել հառաչ մը Այ-
րարատայ խորշերը և Մասիսի ըստ-
ուերը սիրողաց սիրտերէն .

Տալ հանել յոգւոց մը , և առ-
նուլ յոգւոց մեր նախնեաց հոգի-
ներէն , առնուլ օրինակ զԱստուած
պաշտելու ապրելու մեռնելու՝ մեր
պապերու կեանքէն .

Տալ ցօղել ցօղ մը 'ի ցօղոյ մեր
աչաց , խառնել զայն ընդ արիւն
հոսեալ մեր հարանց անձինքներէն .

Տալ սիրել Հայոց անոնց սուրբ
յիշատակը և այն հողը՝ որոյ հա-
ցը կերան , որոյ ջուրը ըմպեցին ,
որոյ օդով անան , որոյ վրայ մե-
ծացան զօրացան , ապրեցան , ին-
կան . և անոր փոշիներուն խառ-
նուեցան իրենց ոսկորները :

Այս և եթ է ահա երկասիրողիս
ղանքն , փափագն ու նպատակը :





ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ա. ՄԱՍԻՆ

Երբ սուրբ վարդան և իւր հետ եղած Հայ նախարարները Յազկերտէն կանչուելով Պարսից դուռը՝ կը բռնաբարուին կրակապաշտ լինելու, կ'երկարի իրենց վերադարձը, ու առ երեսս յանձն կ'առնուն Մոզական կրօնքը՝ և կ'արձակուին Յազկերտէն դալ 'ի Հայաստան Մոզերով, Մոզ պետներով, զօրականօք, և կրակապաշտութեան ամենայն հանդերձանօք :

ՀՄԱՅՆԱ կ' սուրբ վարդանայ եղբայրը միշտ հողալով եղբօր և միւս նախարարաց այնքան յուշանալոյն վրայ, տեսիլք կը տեսնէ, և այն է որ առաջին դուռը կը բանայ Ա. մասին գրուածոյս. զոր կը պատմէ իր Համադասպեան եղբօր՝ 'ի լուր համայն իւրեանց սերնդոց և ծառայից Մամիկոնեանց Տան :

ՍՈՒՐԷՆ ծեր ծառայն է Համադասպին՝ վարդանայ հօր :

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ՝ եղբայր է վարդա-
նայ և Հմայեկին :

ՎԱՀԷ ծերունի հաղարապետ՝ կամ-
սարական Արշաւրի տան , որ Այրարա-
տայ Օշականէն Արշաւրի կնոջէն կը զըր-
կուի գոյժ բերել Հմայեկին թէ Պալաից
դուռն դնացող Հայ նախարարք զՔրիս-
տոս ուրացած եկեր և մօտ են Հայաս-
տանի դրան , զՀայաստանը կրակապաշտ
ընելու համար : կը պատմէ այս վահէն
թէ սուրբ Հայրապետներ ժողովուած՝
օրէնք և պատերազմ հրատարակեցին ու-
րացողաց դէմ :

ԲԱԶԷ կապարճակիր Հմայեկին՝ կու
դայ Աշտիշատէն , և Ռշտունի Սահակ ե-
պիսկոպոսէն հրաւիրակ և բանբեր Հմայ-
եկին՝ պատրաստուիլ հասնիլ ՚ի պատե-
րազմ ուրացողաց դէմ :

ՏՈՀՄԱԿԱՆՔ և **ԾԱՌԱՅՔ** Մամիկոն-
եանց , որք առ հասարակ խրախուսուած
վառուած սուրբ հաւատոյ վրէժխնդրու-
թեամբ և Հմայեկին ու Համազասպեանի
խօսքերէն , բանակ կը կազմեն Մամիկո-
նեան նախարարաց տակ եղած բոլոր գա-
ւառաց Հայերէն , և կը խաղան յառաջ
՚ի ճակատ ՚ի կուլ ուրացողաց դէմ :

Ա. ՄԱՄՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԲԱՆ

ՎԱՐԴԱՆԱՅ ՏՈՒՆ 'Ի ՏԱՐՕՆ

ՀՄԱՅԵԱԿ

Համազասպեան եղբայր, քանի գիշեր է, ահաւոր տեսիլքներով կը զարհուրի հողիս :

Աշտիշատէն սաստիկ հողմ կը շնչէ, Պարսից չար քամիին դէմ ահագին փոթորիկ կը յարուցանէ :

Հեղեղներ կը վազեն Արեւելքէն, և կայծակ ու շանթ կատաղի ջրոց հետ խառն կու գան կ'ողողեն Հայաստանին արտերը, կ'ապականեն, կ'այրեն, կը լափեն մեր երկրի բովանդակ վայելչութիւնը :

Ասողեր կը ցոլային Գրգուրայ գա-

գաթէն , աստեղուներ իբրեւ կարկուտի
գնտակներ կը տեղային մեր լեռները , և
Մասիս լեռը իբրեւ դէղ խոտոյ կը վա-
ռէր : Ար վառէր՝ այլ իր գագաթան ճեր-
մակ հերը , իր վրայի ճիւնն ու սառոյց-
ները անհալ կը մնար , և Երասիս այն
բոցերով տաքցած կ'եռար , բայց իր մէ-
ջէն ցնցուղներ կ'արձակէր մեր երեսին ,
որք թէպէտ ջերմ՝ այլ զովացիկ էին :
Ա'եռար Եփրատն և կը փրփրար . իր
մէջէն կելնէին մեծամեծ կէտեր , կը կըռ-
ուէին վիշապի մը հետ՝ որ Պարսից կրա-
կը կը բերէր : Անթիւ օձեր կային վիշա-
պին դինուոր : Եւ Մասիսի կողերէն ա-
ռիւծներ իջան , Բղնուներիաց ծովէն թըռ-
չուններ հասան . կորդուաց լեռներէն
առիւծներ խոյացան , վիշապին և իր
օձերուն ողջ անձը արիւնլուայ խոցեցին :

Անցք մի հանդերձեալ է անցնիլ Հայ-
աստանի գլխովը : Մեր վարդան , մեր
եղբայր , և այնքան Նախարար և ան-
թիւ Հայք՝ Պարսից դուռն են : Ա՛հ , ո՛վ
գիտէ , Աստուած , Աստուած , ո՛վ գի-
տէ , ի՛նչ շարեաց ենթակայ ինկած են
կրկին գազան Յազկերտէն :

Երթամ, անշուշտ սուրբ ժողովքը
գիտակ է :

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Եւ ես ընդ քեզ :

ԲՈՂՈՐ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՔ

Եւ մեք ձեզ հետ :

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Մամիկոնեանք Հայաստանին պաշտօն
պան՝ և անոր նահատակներն են :

Երթանք միատեղ :

ԲՈՂՈՐ ՄԻԱՍԻՆ

Ո՛վ Հայաստան

Ո՛վ Հայոց ազգ

ՍՈՒՐԷՆ

Տէ՛ր իմ Հմայեակ (Յեռ+ ծակապին զար-
նելով) . Այս գլուխը՝ գեղ դալար էր քան
զվարդ մայիսին, այս աչքերը գեղեցիկ
էին քան զծաղիկ Շովասարին, դեռ քսան
էր իմ տարին . ես՝ ոտքս յասպանդակ,
այս տէգն ահագին գերան իմ ձեռին՝
Օձին շամբերէն, իմ աղեղն էր կազմած

Վիշապաց անտառէն , իմ նետն մահա-
բեր՝ կաղնին Սեւսարին . ես՝ կապար-
ձակիր էի Մամիկոնեանց քաջաց քո ա-
ռիւծ պապերին . Սասունեաց սարերը ,
կորդուաց կորդ լեռները , երբ մեր ստքը
կը կոխէր՝ կը սարսափէին մարդն ու գա-
զաններ . առիւծն իր կորիւն , արջն և իր
ձագերը քանի՞սն ենք շամբրեր , քանիսը
խորտակեր :

Վարդան իմ ձեռքէս , այս արի բազ-
կէս իր մարզն է առեր . անոր նետն ու
սուր բնաւ շեն վրիպիր , հաղար կը փռէ
ու ինքը շիփուուիր :

Ուր որ վարդանն է , Հայեր յաղ-
թող են :

Մի՛ բնաւ խռովիք : Երազն ի՞նչ բան
է , տեսիլն ի՞նչ ցնորք : Մէկ Մամիկոն-
եան՝ հաղար Պարսիկներ , վարդանն ա-
խոյեան՝ բիւր թշնամիներ :

Եւ անոր հողին երկնից հետ կապ է .
Սահակ հայրապետն է զանի օրհներ :

Ա՛հ , Հայեր , Հայեր :

Արշակն ինչո՞ւ մատնեցիք . . . :

Եւ ո՞ւր ձեր խեղճն Արտաշիր . . . :

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Սուրէն լռէ'

Լռէ' Սուրէն

ՍՈՒՐԷՆ

Բայց ինչո՞ւ իրենց թագաւորները
մատնեցին , ինչո՞ւ իրենց բարերարները
սպանեցին :

Սուրբ Սահակայ շղթաններ'ը յիշեցէ՛ք :

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Ա՛հ սուրբ Հայրապետ .

Սահա՛կ Հայրապետ :

ՍՈՒՐԷՆ

Ողջոյն Արեաց դուռն և Պարսից լեռ-
ները դեռ կը սասանին Մամիկոնեան
վասակայ անունէն . Շապուհ սարսափե-
ցաւ անոր սուսերէն : Մուշեղին նիզակ ու
հրեղէն ձերմակ , շատ ջարդեց զպարսիկ
քան զԴաւթի հրեշտակ :

Զիրաւայ դաշտն էր անոր հանդէս ,
և Նպատ անոր նահատակութեանց ար-
ձան : Եւ ձեր հայրն . ա՛հ , իմ տէրն
Համադասպ , իր բոլոր օրեր պարսկին

մահ էր, Հայուն կեանք էր : Ի՞նչ, լը-
ռե՛մ : Ի՞նչպէս, մոռանա՛մ : Միթէ անոնց
որդիք չէք դուք, միթէ անոնց ծառան
չէ՞ Սուրէն :

ՀՄԱՅԵԱԿ

Լռէ՛, Սուրէն :

Լռէ :

Մուշեղին բազուկը կը սիրեա, լռէ :
Համազասպին մահը կը սիրեա, լռէ՛ .
հին ցաւերը թո՛ղ, նոր ցաւերն ալ շատ
են Հայաստանին :

Ա՛հ, Աստուած, Աստուած, մեր
աչքով, մեր օրով ինչե՞ր կը տեսնենք :

Գենչապուհ խորամանկ, աղուէս Գեն-
չապուհ Հայաստանը շրջեցաւ և անոր
հիմունքը շրջեց :

Ազատ ժողովուրդը գերութեամբ կա-
պեց :

Ազատ եկեղեցին ստրկութեան են-
թարկեց : Մահու դեղ նա Հայաստանին
կերցուց քաղցր ճաշին հետ, և այսօր
Մասիսն և իր զաւակները 'ի սիրտ թու-
նաւորած են . Այրարատն ու իր բոլոր
գաւառները մահու տագնապ կը կրեն :

Հայե՛ր, հայե՛ր, ձեր թագը մատ-
նեցիք, ձեր կեանքը օտարին ընծայե-

ցիք . արիւնդ անոր փառաց համար ,
 վաստակդ անոր շահուն համար , և այ-
 սոր քու հաւատքն ալ կը բռնաբարէ ,
 քու հողիդ ալ իրեն գերի ընել կ'ուզէ :
 Ալկն օտարը՝ իրեն զխնող ու ապաւի-
 նող ազգին՝ ա՛յս օրսակ կուտայ , ա՛յս
 վախճանը կու տայ . . .

Ա՛լ է սա կու գայ :

ՎԱՀԷ

Ողջոյն :

ՀՄԱՅԵՍԿ

Վահէ՛ :

ՎԱՀԷ

Տէ՛ր իմ :

ԲՈՒՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Բարի՞ է , Վահէ՛ :

ՎԱՀԷ

Բարին Աստուածն է :

Քահանէն կու գամ ուղղակի , Ար-
 շաւրի Տանէն . կամաարական բամբիջը
 զրկեց զիս գոյժ տալ ձեզ :

ԲՈՒՈՐԸ ՄԻՍՍԻՆ (Յեռ + շճակարէ)

Ա՛ստուած . Ա՛ստուած . . .

ՎԱՂԷ

Չեկա՞ն միթէ տակաւին Սրբոց Թըղթեք և հրեշտակները այս տեղ : Բոլոր վեռները ու ձորերը գինաւորուած սրտորստ են . գեղն ու քաղաքներ բանակ կտրեցան , կը վազեն Պարսից ճամուտարը , և եկեղեցին իրենց հետ կ'ընթանայ . Սուրբ Վարդապետներ և քահանաներ դորապետի պաշտօն կը վարեն , խոչ 'ի յաջին , Աւետարան 'ի ձեռին . և օրէնք հրատարակեցին .

« Թաղաւոր Աստուածն է .

« Եղբայր զեղբայր մորթէ .

« Ամուսին զամուսին սպանէ .

« Հայր զորդին սատակէ .

« Այդին զհայր խոցոտէ :

« Պատերա՛զմ Աստուծոյ հաւատացելոց՝ ընդդէմ գԱստուած ուրացելոց » :

Եւ ահա կնիկներ քաջ քաջ կը խիզախեն , կ'աղաղակեն , կը վազեն , արցունք աչքերէն , արիւն սրտերէն կը հոսեն իրենց կոխած հողերու վրայ , կը վազեն մեռնիչ ու մեռցունելի իրենց անձանց .

հատորները : Ամայացան քաղաքները :

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Բայց ի՞նչ է այդ ամէն , ինչո՞ւ այդ
ամէնը , վա՛հէ՛ , ինչո՞ւ համար :

ՀՄԱՅԵԱԿ

Եւ ո՞ւր է բանակատեղը . . .

ՍՈՒՐԷՆ ԵՒ ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Սուրեր առէք , զէնքեր բարձէք :
Գարձի՛ր վա՛հէ , ամենքս ալ այն տեղ :

ՎԱՀԷ

Գուժկան հասաւ Պարսից բանակէն ,
Հայ նախարարներ մոխիրը պաշտեցին ,
զՔրիստոս ուրացան :

ԲՈԼՈՐԸ ՄԷԿՏԵՂ

ԶՔրիստո՞ս ուրացան :

ՎԱՀԷ

Այո՛ . և մոգպետներ իրենց հետ , և
մոգեր անթիւ , և քաջ քաջ զօրքեր կուլ
գան Հայաստանը ,

Խաչերը կործանելո՛ւ համար :

Սուրբ տաճարները ապականելո՛ւ հա-
մար .

Սուրբ Աւետարանը այրելո՛ւ համար .

Սուրբ Քահանաները սպաննելո՛ւ հա-
մար :

ՀԱՄԱԶԱՍՊԱՆ

Բայց մեր հաւատքը յաշխոյ է . մեր
հաւատքը մեր հոգին է . մեր կեանքն է :

ՀՄԱՅԵԱԿ

Եւ վարդանն ալ նոյն վտանգին
մէջն է , վահէ :

ՎԱՀԷ

Այո՛ , այդ պէս ասաց դուժկան :

ՀՄԱՅԵԱԿ

Վկայ ինձ սուրբ Աւագան , եթէ այդ-
պէս , իմ սուսերս յառաջ վարդանայ
կուրծքին :

Իսկ ո՞ւր են արդ սուրբ վարդա-
պետները :

ՎԱՀԷ

Իւրաքանչիւր Եպիսկոպոս իր վիճակը
վտարեց, մէկ խաչի վրայ, մէկ Աւետա-
րանի վրայ ամենքը իրենց ամբողջին,
ուխտ ըրին, երդուան ու դնային:

Քահանաներ թողին եկեղեցին, ու
գեղեր և շիները կր շրջին, Հայեր կը
գինու որեն, և Սահակ Եպիսկոպոսն արդէն
Աշտիշատ հասաւ:

ԲԱԶԷ

Տէր իմ Հմայեակ:

ՀՄԱՆԵԱԿ

Դո՞ւ ևս Բաղէ:

ԲԱԶԷ

Մառայ քո, Տէր իմ:

Աշտիշատ, ն կու գամ: Սահակ Ար-
քաղան հրաման հանեց, և ահա Բա-
ղուն ու Մեղտին, Տանն ու Խորոզք, Կը-
վարան և Յրոնք, և ողջոյն Տարան իր բե-
կրամ դարնան հաւքերաց, իր բեւ Օղոս-
տոսի ամսոյն արագիլներու կարաւանք՝

Թողված են Հայեր Եփրատի բերանը :
Այս տեղ հասայ, նոյն քարոզը լսեցի .
զէնք և սուր, Աւետարան և խաչ,
մանկտին և հարիւրամեան, երիտասարդն
և կոյս, այր և կին, 'ի գէն, 'ի կռիւ,
'ի բանակ :

Չեզ կը մնան, Մամիկոնեա՛ն Տեարք :

ՀՄԱՅԵԱԿ

Ողնի բերդը հասէք, Խոյթ և Սասուն
սլացէք, Պալունեաց, Գնթուկեաց, Վա-
րաժնուկեաց, Ապահուկեաց, կորդուաց,
Խորխոռուկեաց, Քաջրերուկեաց, Առ-
բերանին, ձայն սուէք, և Հաշտենից Ռա-
տանիկներուն իմացուցէ՛ք :

Դաշտն ելէք, Աղձնիք վաղեցէ՛ք, և
բոլոր ամրականաց, քաղաքացեաց, լեռ-
նականաց, գեղջկականաց քարոզ կար-
դացէ՛ք :

Թող թողու վաճառականն իր վա-
ճաքը, սուրբ Աւետարանը պահպանէ :
Չինուորն թողու իր պահակը, քաղաքա-
ցին իր տունը, և կրօնից ամուրը պաշտ-
պանեն : Գեղացին թող թողու իր մաճն
ու արօրը, թող արձակէ իր եղն 'ի լու-
ծէն, հաց պէտք չէ հայուն, այլ գէնք
և հոգի, և արիւն :

Ասացէք հարաներուն, թող թողուն
առագաստը, փեռանք թող բաժնուի հար-
ան, քանզի ահա ասրականել կու գան
սուրբ եկեղեցւոյ առագաստը :

Թափեն թող, թափեն արծաթն ու
ուկին, խաչ և զէնք վեր առնեն :

Հանեն թող ձգեն կոյսերը՝ իրենց
անձանց զարդարանք, և արիութիւն
դդենուն :

Սուրբ Քահանայք թող դուրս գան
առձաբի գուներէն, Աստուծոյ առձաբը
կ'երթայ, անոր առջեւէն թող քաշեն
օրհներդ երդելով :

Նախարարացն ասացէք, թող շնորհան
իրենց գանձը, թող շրջադնուն իրենց
ճոխութեանց, Աստուծոյ և հոգւոյն կոչ-
ման թող վտղեն :

Տիկնայք թող մերկանան իրենց պըն-
րանքները, աղօթք և քաջալերս թող
կարդան :

Շտապաւ դիմեն, շտապաւ հասնին :

Սուր և խաչ, Քրիստոս և արիւն,
հաւատք և ժահ :

Ստուգուողիճութիւն թող զգենուն, հաւ-
ատով թող զարդարուին, 'ի Քրիստոս
թող յադ ենան, 'ի սէր նորին այրիանան :

Կրօնք և մեր կեանք , Քրիստոսն և
Հայաստան մեզ հրաւիր կը կարդան :

Պարսիկն և իր պիղծ կրակ .

Օտարն և իր սուտ հաւատք .

Մոգերն և մեր ուրացեալ նախա-
րարք՝ Հայաստանն են եկեր :

Կետ առէ՛ք , աղեղ բարձէ՛ք , վա-
հան , նիզակ , պարս , սուր , դաշնակ ,
վաղակաւոր , գնդակ , գերանդի , վեր-
ցէ՛ք , քալեցէ՛ք . Աստի՛ն հարուած Հայ
ուրացողաց : Այո , Հայ ուրացողաց , ո-
րոց աղէկ էր մեռնէին հաւատով Պարսից
դրան առաջ , քան ապրած կեանքով
Հայաստան գային՝ մոգ և մոխիր իրենց
կետ բերած :

Ձը խնայել , չողորմել լնաւ սիրե-
լիաց , ծնողաց , եղբարց և աղջականաց :
Հայու ապղէն չե՛ն ալ անոնք , որ ճշմար-
տութիւնը ուրացան : Մեր սիրելիք չե՛ն
ալ անոնք որ պիտոտա ուրացան : Մեր
ծնողք և եղբարք չե՛ն ալ անոնք , որ
յաւիտենական կեանքն ուրացան , սուրբ
աւագանը մոռացան : Միանեցէ՛ք , ջար-
գեցէ՛ք , որ պիտոտոսի խաչն և Լուսա-
ւորչի շարչարանքն առ ժամ կոխեցին ,
սուրբ եկեղեցին և մեր բոլորին հողին

գերի գարչեւեաց անելու կու դան :

Ո՛վ, օտար, օտար, ո՛վ Յազկերտ,
Յազկերտ, դու կարող չիիր Հայաստանի
մային անդամ մնասել, եթէ զվեղ դա-
ւաճան չունենայիր՝ Հայաստանին մատ-
նիչ չը վնո՛ւն Հայերը : Ասոր համար՝ կամ
մեր մահն անոնցմէ, կամ անոնք մեռնին
մեզմէ :

Բայց մեք չե՛նք մեռնիր : Եթէ Աստ-
ուած կը մեռնի, հայ ազգն ու իր հա-
ւատք, Հայաստանն ու իր Եկեղեցին ալ
կը մեռնին :

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Այո՛, եթէ արեւն իր շրջանը կը փո-
փոխէ, սակայն Հայը քա՛նի կ'ապրի իր
կրօնքը շի փոփօեր : Քրիստոսն ու Նուսա-
ւորիչ, Նուստուրիչն ու Հայաստան, Հա-
յաստանն ու Եկեղեցին, Եկեղեցին ու
Հայ, Հայն ու Հաւատ, Հաւատն ու Կեանք
Կեանքն ու Մահ՝ մէկ անձնաւորութիւն
են եղած, և առաքինութեամբ և ան-
մահութեամբ իրար հետ շաղախուած :

Չե՛մ բնաւ սասանիր . մի՛ ոք վհասի
ճրբէք : Այս փորձութիւնները մեր հա-
ւատքին պայծառութիւն կը բերեն , մեր
սուրբ եկեղեցեաց հաստատութիւն կու-
սան :

Ա՛ն , վախցի՛ք այն օրը , ողբացէ՛ք այն
ժամանակը , երբ հաւատքն ու եկեղեցին
իր օրդ իքներէն փոխանակ պաշտպան-
ուելու , շահաւորաւորութեան և մարդ ա-
հաճութեան միջոց կը դառնայ :

Ողբացէ՛ք այն ժամանակ , երբ ժողո-
ւորդն անզէտ և անզգայ՝ իբրեւ ոչ-
խար անմեղ , բայց անբան . երբ իշ-
խանն փառամուլ և օտարին անձնատուր .
երբ պինուորն և զօրասպետ վաս և նեն-
գաւոր . երբ կրօնաւորն մարմնասէր ,
Էպիսկոպոսն իր պատուոց համար՝ քահա-
նայն արծաթի համար՝ կը փոխարինեն ազ-
դըն ու կրօնքը , կը փոխեն զՔրիստոս ,
կը ծախեն զՂուսաւորիչ . կու տան քաջն
ու հաւատքը , և կ'առնուն իրենց անձանց
փառք . կը վաճառեն եկեղեցին , և կը
դնեն իրենց մեծութիւն . կը վաճառեն
զժողովուրդ , և անոր գնով կը զարդար-
ուին , անոր արիւնտով կ'ոսկեզօծեն իրենց
կուրծքն և ուսերը , կը պսակեն իրենց

պարանոցն ու դագաթը • ողբալու է այն
ախտակիր ժողովուրդը • ողբալու է այն
անկարեկից հովիւն ու առաջնորդը :

Իսկ մեք՝ Ն. դարու Հայքս , մեք և
մեր սերունդ՝ գառն մեր խաղաղութեան
մէջ , առիւծ մեր հաւատոյ վրէժխնդրու-
թեան մէջ • փառք մեր եկեղեցականաց ,
պարծանք մեր իշխանաց , օրհնութիւն
մեր ժողովրդականաց : Ահա՛ զէնք , ահա՛
մեք • ահա՛ պատերազմ , ահա՛ Հայք • ա-
հա՛ հաւատք , և ահա՛ հաւատացեալքս •
ահա՛ մահ և ահա՛ մեր էեանք • ահա՛ Քրի-
ստոս , և ահա՛ մեր անմահութիւն ,
փառք , ուրախութիւն , սիրելի , ծնող ,
որդի , եղբայր , դանձ , պատիւ և ամե-
նայն ինչ :

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Մեք Լուսաւորչի գառներն ենք ,
Տրդատայ առիւծներք •

Հայաստանի զիւցաղներն ենք ,

Քրիստոսի հաւատացեալներ :

Հայրենեաց պաշտպանք •

Հաւատոյ նահատակք :

— Արթանք հայրա երթանք •

Թէ մեռնինք , կ'ապրինք .
Թէ մեռցնենք , կ'ապրինք .
Մեր մայր սուրբ Եկեղեցին ,
Մեր Հայրենիք Երկինք .
Ուր Ներսէսն է , ուր Սահակ .
Ուր Քրիստոսն է , ուր արդարք և ան-
մահ հրեշտակք .
— Երթանք , հասցաւ երթանք :

Մնայ բարով Լիւրատէսն .
Մնայ բարով Տարօնն և Տօրոս .
Իննակնեան աղբւրք .
Քիւրակնեան լերինք .
Մնան բարով մեր նախնեաց շիրիւք :
Սասունն ու Տաղօնք .
Գրգուռն և Ներբովթ ,
Մնան բարով Մեղրի ջուրքն
Եւ աղբերակունք :
— Երթանք հասցաւ երթանք :

Մնան բարով վանորայք ,
Մենաստանք և Նշխարք սրբոց .
Դաշտն ու արմախք , ծաղկունք և Կ-
րանք թռչնոց :
Երանք թռչնոց ,
Եկէք , ձեր ձաղերով մեր վայրը վայե-
լէք .

Մինչեւ դառնանք մեք, կամ մեր սե-
րունդք :

Կ'երթանք սխալերազմ սուրբ կրօնից
համար .

Ձեզ մնան մեր գանձ, տուն, արտ,
ոսկին, և աշխարհ .

— Երթանք, օն սրեմն երթանք :

ՀՄԱՅՆԱԿ (սրտայայտ)

Այդպէ՛ս, առաքինիք, այդ պէ՛ս, թող
իմանան ազգեր թէ՛ իրաւունքը առանց
թագաւորի ալ կը տիրէ, առանց թագի
կը թագաւորէ, և առանց զօրատետի և
զէնքի ալ կը յաղթէ : Հայոց կուսանք դիւ-
ցազունք են, հայոց կանայք սրիականք,
և արք յաղթականք : Հասցա՛ իմ հա՛րք
և եղբարք, հասցա՛ իմ քօրք և իմ մարք,
հասցա՛ անյասպաղք :

ՀԱՄԱԶԱՍՊՆԱՆ

Հսեցէ՛ք, անուացէ՛ք, քաջեր, իմ
ձայնիս, իմ վերջին բանիս :

Ուխտեցէ՛ք առ Աստուած, և սրտա-
պրնդեցէ՛ք զձեզ : Այս առաջին շէ՛ որ

դուք 'ի կուիւ կ'ելնէք , բայց առաջին ան-
դամն է որ յանուն կրօնից կը կուռէք .
և ոչխարհաւ , և կնաւ , և որդւով կ'ել-
նէք :

Ա' ելնէք 'ի կուիւ հաւատոյ համար , և
որքան քաղցր է մեզ արիւն թափել այս
սուրբ ուխտին վրայ , այնքան անեցուն
այնքան հաստատուն պիտի ընէ Աստուած
մեր արեամբ իր սուրբ եկեղեցին այս
հողերուն վրայ :

Գիտեմ կը ցանկայք ամենեքեան մեռ-
նիլ սուրբ հաւատով , մտնել վայելել
երկնից արքայութիւնը , բայց մի' համար
ըէք թէ մեք վերջինն պիտի լինինք Հայ-
աստանի աստուածապաշտները . ո՛չ ,
ո՛չ . . .

Այս աշխարհը , Աստուծոյ ոտից աս-
պընջական երկիրը , Աստուծոյ աչաց հա-
ճելի աշխարհ , Հայաստան , որ իւր ա-
րարչագործ ձեռաց նախկին դաստա-
կերուն է Եդեմ . Նոյ և Հայկ Աստուածա-
պաշտները ա՛յս աեզ : Այս երկիրը , զոր
և 'ի նորումս փրկագործութեամբ հրա-
շաղարդեց , Առաքելոց բանիւն և ա-
րեամբ , Նահատակաց ճգնութեամբ
և մարտիրոսութեամբ , Լուսաւորչին :

չարչարանօք և լուսաւորութեամբ, իւր
Աստուածային փառաւոր Իջմամբ, և Շո-
ղին ծագմամբ: Այս Աշխարհ կ'ըսեմ, որ
ծագէ 'ի ծագ եկեղեցի է և արքայու-
թիւն, յաւիտեան պիտի մնայ: Հայաս-
տանը Հայաստան պիտի մնայ, Հայն՝ Հայ:
և իր հաւատքն 'ի Քրիստոս պիտի ան-
խափան մնայ, քանի ասաղերն յաստե-
ղատուն կը շրջին: Ի դուր թող չաշխա-
տի Յապկերտ: Այս այն որ աս անուններ
կը փոխուին՝ երբ հայն իր եկեղեցին փոխէ:

Հասցա՛, անուն մեր ետեւէն, առա-
քինութիւն մեր սողեւէն, անմահու-
թիւն յերկինս, անմահութիւն յերկրի,
յիշատակ մեր սերունդոց, պսակ ընդ սըր-
բոց: Հայն իր կեանք, իր ազգութիւն,
իր ազատութիւն իր եկեղեցւոյ մէջ պի-
տի գտնէ, և ամէն բան կը կորուսանէ,
երբ իր եկեղեցին կորուսանէ:

Ա՛նուցնին վայելչութիւնք, փափկու-
թիւնք, ճոխութիւնք, գանձ, ոսկին,
կ'անուցնին ազգեր և իրենց կարծիքներ,
կը կործանին թաղաւորութիւններ, կը
գլորի թագն, կը փշլին գէնքեր, կը
ննջեն կենդանիներ: մէկ բան է որ կը
մնայ, Քրիստոս և իր եկեղեցին, և անոր,

Կամար է ահա մեր նահատակութիւն :

Մեք կը ննջենք մեր հարց շիրիմներուն ծոցը , կուգան մեր սերունդները , կուգան օրհնել զվեզ կամ՝ անիծանել . կը քննեն մեր գործքեր և անուն կը կընքեն մեզ : Եթէ սգան մեր եղբարց ուրացութեան վրայ , թո՛ղ մխիթարուն մեր առաքինութեանց վրայ . եթէ անոնք կորուստ գնեցին իրենց հողւոյն , և ամօթ մեր դարուն , մեք սգործանք վաստակինք սուրբ եկեղեցւոյն և մեր անձանց և հայրենեաց փրկութիւնը :

Չրտուի , չը խօսուի , չը յիշատակուի ազգաց մէջ՝ թէ Հայերն ուրացան : Մեր դարուն նահատակութիւնը անսնեն , անոնց վատութիւնը մուսնան , և ասեն . Հայեր ա՛յն ազնիւ ազգն են , որ իրենց կանայք և կուսանք , իրենց ծերք և երիտասարդք , իրենց մանկուկք և տղք , արիւական են , սխառուական են , ճշմարիտ են :

Ողջոյն տուք միմեանց ,
Ո՛ն ուրեմն յառաջ ,
Պաշտպան մեզ սուրբ խաչ :
Կեցցէ Հայաստան .
Կեցցէ Հայոց Ազգ :

ԲՈՂՈՐ ՄԻԱՍԻՆ

Օ՛ն ուրեմն յառաջ .

Պաշտպան մեզ սուրբ խաչ .

Կեցցէ՛ Հայաստան .

Կեցցէ՛ Հայոց Ազգ :



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Բ. ՄԱՍԻՆ

Արդէն վարդան Հայոց զօրավար եղեր է, իր խոստովանութիւնը յայտնելով սուրբ ուխտին :

Վարդանայ ճերէցը իր եկեղեցիով՝ ջարդ ու փշուր ըրած է մոգեր և մոգպետներ :

Քրիստոսի բանակը կազմուած ու զօրաւոր հոգւով ջախջախեր է Պարսկին զօրքը : Վասակը իր նենգութեամբ յայտնուեր է, ու կրկին երդում ընելով խաբեր է Հայեր և աղաւթեր գինքը : Շատ քաղաքներու և գաւառներու տիրած են Հայեր :

Ներչապուհ Արծրունին կողմնապահ կարգած են արեւելից վասակայ հաւատացած են Հայաստանին միջնաշխարհը պահպանել, և վարդանն իր հետն առած կտրիճ Հայ զօրքեր դնացեր է Աղուանից աշխարհը Պարսից դէմ կռուիլ :

Աղուանից քրիստոնէութիւնը պաշտպանել :

Վասակը պատեհ միջոց գտնելով կրկին Պարսից հետ Պարսիկ եղեր, և ամէն կերպ անկարգութիւն, բռնութիւն, աւեր և ապականութիւն Հայոց աշխարհին և սուրբ եկեղեցեաց վրայ հասուցեր, Հայ նախարարաց ընտանիք և գանձերը գերի տարեր է :

Վահէն, կամսարականի տան ծեր և հաւատարիմ քաջ հազարապետը այս միջոցին Օշական՝ Արշաւրի տան մէջը նրստած՝ ինքն իրեն հոգւով կ'եռայ հայրենեաց, քրիստոնէութեան և քաջութեան սիրոյ կրակէն, կ'սկսի բարձր խորհուրդներով և վսեմ զգացումներով խօսիլ որով կը բացուի գրուածոյս Բ. մասին գուռը :

Չարեհ Սիւնեցի, վասակին հաւատարիմ թիկնապահներէն մէկը, կեղծաւորութեամբ Վահէին մօտ կու գայ, ամբարիշտ զգացումներով և խորհուրդներով կ'սկսի ընդդէմ խօսիլ Վահէին . Վահէն կը պատասխանէ . Չարեհ կը փաստաբանէ անզգամութեամբ, և Վահէ բարեպաշտութեամբ :

Ներսէհ և Հրահատ՝ Կամսարական
Արշաւրի փոքրիկ զաւակները՝ Վահէին
գիրկը իյնալով իրենց հօր և Վարդանայ
դարձը կը հարցանեն :

Միւնեցի Չարեհ կը մռմռայ անոնց
վրայ : Եւ ահա յանկարծ դղրդիւն , և
աւետարեղք կը հասնին , թէ Վարդանն
ու Արշաւիրը բանակաւ ու յաղթանա-
կաւ դարձան ողջ Աղուանից աշխարհէն ,
ու Վասակայ ձեռքէն խլելով ասորած
գանձ և ընտանիք նախարարաց , կու գան
ցնծութեամբ :

Այս աւետեաց ձայնէն խորին զմայլ-
ման մէջ կ'ընկղմի Վահէն : Չարեհ՝ ամօ-
թով և ահ ու դողով հազիւ կը սողոսկի
կը փախչի դուրս Կամսարականի տանէն :

Վահէն կ'սթափի և սուր կը խնդրէ :
Չարեհը կը փնտրէ որ զոհ մ'ընէ այն խըն-
դութեան տօնին՝ ամբարշտին կեանքը .
ապա գոհութիւն և օրհնութիւն կը կար-
գայ արտասուօք՝ խաչելոյն և բարձրելոյն
Քրիստոսի Աստուծոյ :



Բ. ՄԱՍՆ

ԵՐԿՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

ՕՇԱԿԱՆ ԱԻԱՆ

ԱՐՇԱԻՐԻ ՏԱՆ ՄԷՉ

ՎԱՀԷ

Հասաւ վերջապէս այն օրը, որ յաւիտենականն Աստուած վճռէ Հայաստանին նոր կեանք կամ կորուստ :

Ահա՛ մէկ կողմէն Պարսկաստանն իր կրակով և մոխրով, մոգեր, մոգ պետներ, զօրքեր և ուրացողները բերաւ լեցուց Հայաստանը . մէկալ կողմէն եկեղեցին իր զաւակներով, Հայաստանն իր Հայերով կը ժողովին, կը դինուորին, կուռել այս ահագին վտանգին դէմ, վանել կամ մեռնիլ այն դարչելի կրօնքին դէմ :

Ա՛հ . Աստուած, Աստուած, դու որ

սուրբ մարտիրոսաց արեամբ պսակեցիր այս աշխարհը , և անոնց օրհնեալ մասանց նշխարներով զարդարեցիր , պատրասարեցիր , սիրեցիր այս ազգը , և իբրեւ քո ձեռատունկ Ադին ծաղկեցուցիր վայելչութեամբ , քո մարդասիրութեամբ , քո հայասիրութեամբը փրկութեան եկեղեցի կազմեցիր :

Հայաստանի վարդ Սանդուխտն քո առաջին պատարագն է մեր եկեղեցւոյն . սուրբ Առաքելոց քրտինք և արիւնը յիշէ՛ , Հռիփսիմեանց Անձինք քեզ նուիրեալք , սուրբ Գրիգորին վիրապն , Բեւեռք , Կոճեղք , Կապարն , Աղն , Մոխիրն Կախաղանն , Աղօթքն , Ճգնութիւնն , Տքնութիւնն , Քահանայութիւնն , Արքութիւնն : Ներսէսին առաքինութիւնք և բաժակ : Սահակին շղթայք , արտասուք , յիշէ՛ տէր , յիշէ՛ և մի՛ մոռանար , որ 'ի ձեռն նոցա քեզ հաւատացինք : Մի՛ թողուր խաւարն զօրանայ քան զլոյսդ , մոխիրն բարձրանայ քան զարեւդ , Պարսիկն քան զՀայ , Ատրուշանն քան զԵկեղեցին , կրակն քան զխաչ :

Կեանք մը ունինք , և այն սուրբ եկեղեցին է :

Տե՛ս, Աստուած, Աստուած, տե՛ս
այս աշխարհը • իր զօրանոցները փլան,
և մենաստանները անոնց տեղ շինուե-
ցան, պալատները քակուեցան և եկե-
ղեցիք անոնց տեղ կառուցան, թագա-
ւորութիւն գնաց, և քահանայութիւն
անոր տեղը տիրեց, գանձն ու ոսկին
սպառեցան, և քո սուրբ հաւատքին մի-
այն կը հսկենք, վայելչութիւն կորսուե-
ցաւ, և քո սուրբ Աւետարանով միայն
կը փառաւորուինք • մեր սուրն ու գէն-
քը դրինք օտարի ոտքին տակ, մեր ոյժն
ու կեանքը տուինք մեզ տիրողին : Տե՛ս,
Տէ՛ր, ոչ միայն Պետրոսի նման ուռկան
մը և նաւ մ'է որ կը թողունք, այլ ամէն
բան : Թողինք, թողինք զամենայն և ե-
կանք քո ետեւէն, Տէ՛ր, ինչպէս քո
բանը կ'աւետարանէր • միայն կ'աղաչենք
որ դուն ալ զմեզ չը թողուս, քո եկե-
ղեցին չը թողուս :

Մասեաց սա՛ր, Մասեաց սա՛ր •

Այս վաթսուն գարուն իմ գլխովս
կ'անցնի • իմ ալիք ճերմակ, քո գագաթ
ճերմակ, ես շէի տեսեր այսպէս մեծ
վտանգ : Ո՛հ, չե՛մ կարող ժուժել : Ա՛յլ

դու յաւիտենի՛ց արձան , դու քո բնակչաց , քո որդւոց վիճակը այսպէս դառնագոյն կը տեսնես , և ինչպէ՞ս կը ժուժես . կամ ինկի՛ր դուն ալ , ինկի՛ր կործանուի՛ր այս ազգին հետ , կամ պահէ՛ ասոնք ալ քանի որ կ'ողջագուրվիս դու երկնից ցողին ու ամպերուն հետ :

Ազգեր որ կուգան , գքեզ Հայաստանի լեռ կ'անուանեն , քո վրայ հայկական անուն և քաջութիւն և հաւատք կը կարդան : Բայց երբ Հայն ու Հայաստան փնտռեն ու չգտնեն , գքե՛զ ալ կը մերժեն , քեզմէ այն անունները կը պահանջեն , յայնժամ գքեզ ալ չեն ընդուներ :

Այո՛ , թէպէտ այսօր դու օտարի մը ձեռքի տակն ես , բայց քո որդւովք դեռ կը բերկրիս :

Այո՛ , թէպէտ Հայեր այսօր օտարի մը ձեռքի տակն են , բայց դեռ Հայ են , և քանի որ Հայ են՝ կեանք ունին , կ'ապրին . և քանի որ կ'ապրին , օր մի կ'ազատուին : Աստուած՝ ազգ մը կը ձգէ կը մատնէ , բայց իսպառ չի կործանէր . զանոնք կը շարշարէ , կը մերկացնէ , հայրենիքէն ալ կը հանէ : կը ցրուէ կը տարագրէ , բայց քանի որ այն ազգը իր անունն իր

լեզուն և կրօնք չի փոխեր, կը պահէ
ու չի փոխեր, այն ազգը կ'ազատէ, այն
ժողովուրդը կը փրկէ Տէր: Ազատութիւն,
փրկութիւն, ոչ թագաւորի թագին ճա-
ճանչաւոր ականց շարքին մէջն է, ոչ
գոռ և հուժկու զօրապետին ահեղ հրա-
մանին մէջը, ոչ նախարարին մեծու-
թեան, ոչ գանձուց ճոխութեան, ոչ
սկայից բազմութեան, ոչ պողովատին
երկաթին, ոչ սուրին նիզակին, ոչ կեր-
պասին բեհեզին, ոչ ճարտասանի լեզուին:

Այլ այդ սրբազան տարերքն ժողո-
վուրդն է միմիայն. քանի կ'ապրի ժողո-
վուրդ մը իր սեպհական ազգային կեան-
քով, կ'ապրի ազգային լեզուով, կ'ապրի
իր հայրենեաց մէջ պաշտած և իր նախ-
նեաց պաշտած ճշմարիտ կրօնքով, այն
ժողովուրդը՝ թէ և յետին գեղջուկ մնա-
ցած լինի, սակաւաւոր և յետին աղքատ,
յետին ստրուկը համարուած լինի, բայց
նա ազնիւ է, կենդանի է, լուսաւոր է,
որ մի փառաց կը հասնի. անոր սիրտն
հայրենիքը չի՛ մոռնար, անոր հոգին զԱս-
տուած կը պաղատի, իր ազատութեան
համար, և հայրենեաց ու ազգային յի-
շատակներ կ'եռացընեն անոր երակներ,

կը վառեն անոր խորհուրդը, կը յարու-
ցանեն անոր հոգին, և այն օրն է ահա
որ աւազակէն գողցուած և անոր բռնա-
ւոր ցուպին տակը մատնուած վիրաւոր
մէջքակոտոր գառնուկը, եղջերաւոր խոյ
կը դառնայ, իր հօտին մէջ կը խոյանայ,
զարնելով, խորտակելով իր դէմ ելնող-
ները . այն օրն է ահա, որ իբրեւ տկար
ճնճղուկ որսացեալ նենգողէն արծուոյ
ձագերը՝ ճանկուտելով իրենց սուր ու
զօրացած մագիլներով որսացողին երեսը,
կը թռչին ազատ, և կը խոյանան իրենց
երամին մէջ :

Ա՛հ, Մասիս, թէ իյնան քո որդիք,
թէ ցրուին քո որդիք, թէ սարկանան քո
որդիք, ես կը մեռնիմ, դու անմահ ես,
ասա՛ անոնց այս պատուէրը . Պինդ թող
պահեն իրենց լեզուն, Պինդ՝ իրենց ա-
նունը, Պինդ՝ իրենց կրօնքը, և կը փրկ-
ուին օր մը, կը փրկուին և կը խոյանան
խայտալով, քո երեսաց առջեւ :

Բայց ես ի՞նչ կը խօսիմ, ցնորած եմ
սրտիս ցաւերէն, խռոված եմ մտացս
խորհուրդներէն :

— Ա՛վ է այն :

ԶԱՐԵՀ

Զարեհ Սիւնեցին, որ կը բարեւէ
զձեզ:

ՎԱՀԷ

Բարի՞ է, Զարեհ. ի՞նչ լուր, ի՞նչ ճայն
կայ բանակէն. յաջո՞ղ են Հայեր, յաղ-
թե՞ց խաչ, տիրե՞ց եկեղեցին:

ԶԱՐԵՀ

Վահէ, վահէ, ձգէ՛ այդ անհնարին
իրաց երազները. ի՞նչ յաջողութիւն,
ի՞նչ յաղթութիւն, ի՞նչ տէրութիւն. այս
սարսափելի անոցքեր քու աչքիդ առջեւէն
անցան, ի՞նչ մեծամեծ գործեր գոր-
ծուեցան. դու տակաւին Հայեր, խաչ,
եկեղեցի կը հաւատաս, և կը յուսաս
կեա՞նք տեսնել տնոնց, յաղթանա՞կ
տեսնել անոնց:

Վահէ, դու գիտես Յազկերտին խո-
րագէտ, իմաստուն և հզօր կարողու-
թիւնը, դու գիտես Պարսկին անպար-
տելի արիութիւնն, անթիւ զօրքն ու զօ-
րութիւնն. և որոնք կրակ կը պաշտեն,
կրակով կարծես իրենց հոգին կը բոր-

բողի, իրենց արիւնը եռ կուգայ, հրեղէն հեղեղներ կը վազեցընէ չորս կողմն տիեզերաց :

Հայն ո՞վ է, որ անոր ղիմագրաւ կանգնի . և քո պաշտպան խաչն ու եկեղեցին շեմ հասկընար թէ ի՞նչ են և ի՞նչ զօրութիւն կուտան իրենց հաւատացողին :

Արօնք մը պէտք է մարդուս . թող չը լինի աւետարան, թող լինի մոզականն . թող չը պաշտենք խաչ, պաշտենք կրակ . թող փոխանակ Յովսեփայ սրղւոյն, հաւատանք Չրադաշտին . շեմ գիտեր ի՞նչ առաւելցուց մեզ Քրիստոս, և ի՞նչ կը պակսեցընէ Չրադաշտն : Այլ այս քաջ գիտեմ, երբ Յիսուս Քրիստոս Հայաստան մտաւ, արիւն, մահ, աղքատութիւն, ստրկութիւն, աւերումն, և ամէն կերպ չարիքն յաճախեցին այս աշխարհը . մերկացաւ Հայն իր վայելչութիւն, ճոխութիւն . աղաւաղեցան փառքեր, եղծան կարգաւորութիւններ . ինկաւ նիզակ քաջին ձեռքէն, փչրեցաւ սրակ արքայի գլխէն . թագաւորն եղաւ ստրուկ, և ստրուկն յառաջացաւ . հսկայն անարագութեան վիճակեցաւ, և գաճաճն մարդու կարգ անցաւ : Ամէն բան վեր 'ի վայր

ըրաւ Քրիստոս . կանանց բազմութիւնն
խլեց արանց ձեռքէն , և կուսութիւն ,
և 'ի կնոջէ հրաժարիլ՝ սրբութիւն համա-
րեցաւ . ասոր համար նուազեցաւ մարդ
Հայաստանէն :

Քանձ ունեցողին վա՛յ կարդաց , չու-
նեցողին երանի՛ . ասոր համար Հայաստան
այսօր վերջին տնանկութեան հասաւ .
որը թշնամւոյն մատնեց , և որը՝ իր մե-
ծութիւն իրեն թշնամի համարելով ցրուեց :

Ներողութի՛ւն յանցանաց , արձա-
կո՛ւմն կապելոց , մա՛հ իրենց անձը պահ-
պանողներուն , և կեա՛նք իրենք զիրենք
մահուան մատնողներուն աւետարանեց .
յիմարութեամբ լեցուց աշխարհը , և խե-
լակորոյս եղան ողջ մարդիկ :

Եւ ի՞նչ կ'ընեն այսօր քո վարդապետ-
ները , վա՛հէ , քո Յովսէփն ու Ղեւոնդ ,
քո Սահակն ու Մուշէն , բոց իրենց բե-
րան առած հրդեհեցին վառեցին ամբո-
խին սիրտը . կ'ողորմիմ անոնց , կ'ողոր-
միմ . ուշակորոյս եղած , իրարու դէմ
կատղած , սնոտի խօսքերով խաբուած ,
ձգած են ամէնքն իրենց տունն ու տեղը ,
իրենց առն ու տուր , իրանց շահն ու
վաստակ , իրենց արտն ու ցանք , իրենց

կեանքն ու վայելք , սուր ու դերանդի
առած վազեր դիզուեր են, սիրելին զսի-
րելին կ'սպաննէ , հայր զորդին կը խող-
խողէ , և այդքան է միայն իրենց ընելիք .
Հայաստանը վերջապէս պիտի սպառի իր
վերջին ճիւղերէն . ահա Նազովրեցւոյ
վերջին բարիք գինքը պաշտող ազգին .
մով կրօնք , ո՞ւր է ասոր փրկութիւնը ,
ո՞ւր է ասոր աւետիքը : Մարդիկներ կը
նուաստացընէ , հանճար , գութ կը կու-
րացընէ , և իբրեւ անասուն « մեռի՛ք »
կ'ուսուցանէ :

Պարսկին դէմ Հայն ի՛նչ պիտի ընէ ,
Թագաւորին դէմ գերին ի՛նչ ընել
կարող է :

Հապա ասա՛ , վահէ :

ՎԱՀԷ

Գնա՛ , կորի՛ր , անօրէն Սիւնեցի , գնա՛
մեռի՛ր . սուրբ խաչի և Քրիստոսի ոտքին
տակ . գնա՛ սատկի՛ր , անշնորհք , աւե-
տարանի շնորհաց առջեւ , որոցմէ միայն
կը պատկառիմ . և թէպէտ ահա՛ սրբա-
մրտութենէս կը սարսռին ոսկորներս ,
բայց խաչին խորին խորհուրդէն , խա-
չելոյն ներողութենէն կը սանձուիմ :

Նախատի՛նք կը դնես Քրիստոսին ,
արհամարհա՛նք կը կարդաս սուրբ Աւե-
տարանին , կ'անարգես փրկագործ խաչն ,
որ մարդկանց անարգութիւնը բարձատ ,
եկեղեցին որ զմարդիկ կենագործեց :

Այո՛, Աիւնեցի , մենք այն Քրիստոսը
կը պաշտենք , որ մեզ ուսոյց , կեանքը՝
մահ համարել , և մահը՝ կեանք : Միթէ
քո տեսած և լսած մարդիկներէն կա՞յ
մէկը՝ որ չմահացաւ , ասա՛ ինձ : Իսկ ո՛վ
որ ՚ի Քրիստոս կը մեռնի , նա կ'ապրի :
Ո՞րն է կեանք : Աեա՞նք կը համարիս արեւ-
ուս ներքեւ ապրողներուն , որոց ամէն
օր , ամէն վայրկեան , ամէն տեղ ու ամէն
վիճակ աղէտալի է , չարեօք լի , և ան-
ցաւոր և կորստական՝ աշխարհիս ամէն
բան մարդոց համար : Ո՞վ ունեցաւ և
խապառ վայելեց . ո՞վ սիրեց և յագեցաւ .
ո՞վ մեծացաւ և շինկաւ . ո՞վ բարձրա-
ցաւ և շիրժանեցաւ . ո՞վ թագաւորեց
և անմահ մնաց . ո՞վ ծնաւ և չմեռաւ :
Ար մեռնի քրիստոնեան եւս , այլ անոր
յոյսը լի է անմահութեամբ . նա նոր և
յաւիտենական կեանք մը կ'սկսի իր մեռ-
նելուն օրը . և ասոր համար մխիթա-
րութեամբ և ուրախութեամբ կը վարէ

և կը կնքէ իր երկրաւոր ու սահմանաւոր օրերը : Բայց սուրբ եկեղեցին մարդոց հնարքով հիմնուած չէ , որ մարդոց հնարքով յաղթուի . մարդոց ձեռքով շինուած չէ , որ մարդոց ձեռքով կործանի . Թագաւորի տուած պարգեւ չէ , որ Թագաւոր զանհկայ իսկ : Աստուծոյ տուրք է եկեղեցին , որոյ հիմունք երկնից վրայ դրուած են , որոյ շինուածքը իր հաւատացելոց սրտին և հոգւոյն հետ շաղախուած են : Աստուած կայ յաւիտեան , իր եկեղեցին կայ յաւիտեան . Հայեր այս եկեղեցւոյ զաւակն են և Քրիստոսին կը հաւատան , ուրեմն Հայեր կան յաւիտեան :

Եկեղեցին դժագ չի՛ վիշրեր , եթէ Թագաւորն անարժան և իշխանքն դաւաճան չը լինին . այլ ընդ հակառակն , եկեղեցին իր զաւակները ամէնն ալ Թագիւ կը պսակէ . կ'ազնուացնէ , կը բարձրացունէ , աղքատը մեծատուն կ'ընէ , երանի՛ կու տայ տնանկին . ուրեմն մեծատանց Թշնամի չէ՛ եկեղեցին՝ Թէ մեծատունք անիրաւ չըլինին : Տկարին քաջալերս կը կարդայ , անկելոյն յարու-

Թիւն, ծառային՝ ազատութիւն, յանցա-
ւորին՝ ներողութիւն . ոչ աշխարհն վեր՛ի
վայր ընելու համար, այլ բոլորն ալ հա-
ւասար քաջ, հաւասար արի, հաւասար
ազնիւ, հաւասար ազատ, հաւասար
մեծ, և միմեանց ներողք, միմեանց սի-
րողք ընելու համար :

Այ Սիւնեցի, կ'ըսես թէ մարդս շատ
կնիկներ պէտք է ունենայ . սակայն մէկ
Ազամին մէկ Եւայ, և մէկ արգանդէ
անթիւ մարդիկ ծնան : Նոյի դարը յիշէ,
բազմացա՞ն այն գարշելիներ, թէ իրենց
անձանց հետ և բոլոր հողագնտիս ա-
պականութեան պատճառ եղան :

Մեք այն Աստուածը կը պաշտենք,
որ զԱբրահամ հարստացոյց և ոչ աղքա-
տացոյց . բայց պէտք է որ մենք ալ Աբ-
րահամ լինինք :

Մեք այն Աստուածը կը պաշտենք, որ
ծովը ցամաքեցոյց, զԻսրայէլ աղատ ան-
ցոյց, Փարաւօնը ցամաքի ջրերով խեղդեց :

Մեք այն Աստուածը կը պաշտենք,
որ զԴաւիթ, տղայ, աղքատ, և հովիւ՝
Թագաւոր պսակեց :

Մեք այն Աստուածը կը պաշտենք,

որ զՍողոմոն և Իսրայէլի տունը օրհնութեամբ , ճոխութեամբ և մեծութեամբ լցոյց :

Այն Աստուածն է Հայաստանի Աստուած , որ զժողովուրդ գերի կը վարէ , կը չարչարէ , և թշնամին զնա կրակի մէջ կը ձգէ . բայց չի թողուր , Աստուած չի թողուր որ վառի : Յիշէ երեք մանկունք :

Աստուած այն Աստուածն է Հայաստանին , որ մեռաւ և յարեաւ . և մեք կը հաւատանք որ մեռնինք ու յարութիւն կ'առնունք :

Աստուած այն Աստուածն է Հայաստանին , որ խաչին վրայ անարգութեցաւ և փառաւորեցաւ . և մեք կը հաւատանք թէ մեր եկեղեցւոյ համար անարգութիւն փառաւորութիւն է մեզ :

Աստուած այն Աստուածն է Հայաստանին , որ անշնչացաւ և արիւնլուայ ինկաւ , բայց կը գոռար , « Քաջալերացարո՛ւք , ես յաղթեցի աշխարհի » . այո՛ , Հայաստանեայց ժողովուրդ իր արեան հոսանաց հետ կ'աղաղակէ Քաջալերութիւն և կը յաղթէ վերջապէս Յազկերտին :

Քրիստոնէութիւնը , ճշմարիտ Աստուածապաշտութիւնը անմահութիւն է

մարդոց : Աստուծոյ սէր , Քրիստոսին
սէր քան զանամարմին հրեշտակներ առա-
ւել քաջ ու աներկիւղ կը գործէ զմարդ :
Այն անձին ծերութիւն չկայ , այն ազ-
գին վախճան չկայ . անոր համար իր
հայրենիքն երկինք համարուած է , և եր-
կինքն իր հայրենիք եղած է . երկնից
Աստուածը կը պաշտէ , իր հայրենեաց
հողը կը պաշտէ , որոյ վերայ երկրպա-
գութիւն կը մատուցանէ Աստուծոյ , և
իր շրթունքները կը քսէ Աստուծոյ անու-
նը յեղյեղելով : Միտքի չկայ անոր հա-
մար երկրիս վրայ . իրեն սիրտը յագե-
ցած է , և զեղուն Աստուծոյ սիրով մի-
այն . կինն այնպէս , այրն այնպէս . և
ոսկին և արծաթ , և փառք և մեծու-
թիւն , և կեանք և վայելչութիւն անոնց
համար՝ եկեղեցին է միմիայն երկրիս
վրայ :

ԶԱՐԵՀ

Աստուածաբանութիւն կը կարդաս
ինձ համար , վահէ , գիտեմ ես աստու-
կը գողամ քո սրտմտութենէն . եթէ կ'ան-
սաք , և եթէ կը ներէք , երկայնամտու-
թեամբ խօսիւք :

ՎԱՀԷ

Խօսեցէ՛ք, բայց ոչ ամբարտաւանութեամբ, ակն ածելով սուրբ հաւատոյն, և հայրենեաց պատուոյն :

ՋԱՐԵՀ

Վա՛հէ, հաւատքդ թո՛ղ սուրբ համարուի, բայց Հայրենիք բառը դեռ իրաւօ՞ւնք կայ մի՞թէ Հայուն կոչելու : Հայաստանը իր հարցն իշխանութիւնն ու կենդանութիւնը տառա Շատրուհին . և այսօր անոնց գերեզմանները միայն մնացին իր ծոց : Հայն իր իշխանութեան հետ իր հարց անու՛նն ալ կորսնցուց, և հարց անաւանց հետ իր հայութիւնն ալ հետեւաբար կորսուած է :

ՎԱՀԷ

Կորո՛ւստ . ի՛նչ Գլածս, Չարեհ, ազգի կորուստ չկայ, և ազգի մը հայրենիք օտարի մը սեպհական չի լինիր : Ազգ կ'ապրի իր եկեղեցւոյն մէջ . և թող գերի երթայ նա, թող Չարդուի, թող Գարրուի, միլիոնաւորներէն թող հարիւրաւոր մնայ, նա իր Աստուած ու իր հայ-

բենիք իր սրտին մէջն ունի . կը կողոպտուի մարդոց գանձ, կը մեքկացընեն անձին զարդարանք, բայց չեն կարող անոր գգացմունքը կողոպտել, քանի որ կայ այն ազգը, կը միշտ իր հայրենիքն . և քանի շատ շարժարուի ազգ մը, այնքան կը մօտենայ նա իր փրկութեան, իր հայրենեաց դրան :

Շապուհ տիրեց այս' Հայաստանի հողերուն, բայց ոչ Հայոց սրտերուն . Յազկերան հարկեց ժողովրդեան անձիքը, բայց ոչ անոնց հոգիք :

Տե'ս, Չարեհ, տե'ս, մնացորդք Հայոց ինչե'ր կը գործեն . տե'ս, քանի' քիօր մտք և Պարսիկ ջարդեց Վանանդայ եկեղեցին, և Վարդանն Հայոց գլուխ անցնելով, և սուրբ քահանայք Հայոց առաջնորդ կանգնելով, քո պերճացած բազմաթիւ ու հզօր Պարսիկներն ի՞նչպէս ջարդեցին . այսօր Հայեր տէր են բոլոր Հայաստանին : Ահա' Արտաշատն մեծ իր աւաններով, և անմատոյց բերդերն Գառնի, Անին, Արաաքի ու իրենց աւանները . Երկայնորդն ու Արհնին և իրենց աւանները . Բարձրաբուն, Խարանիստե, Միտանիսան, անկասկածեղին Ռշտկանն՝ ու սու-

սոնց աւանները • անուանին Վան ու իրեն
աւանները • Գուեալն , Կապոյտն , Որոտն
ու Վասակաշատն , այս ամէնը որ երէկ
լցուած ու ամրացած էին Պարսիկներով ,
կրակով ու մոխրով , այսօր Վարդանայ
սուրն ու ժողովրդեան բազուկը տիրե-
ցին , քանդեցին , տապալեցին , և նորէն
սուրբ խաչ , նորէն սուրբ սեղան , նորէն
Աստուածօրհնութիւն այն տեղերը լցին :

Կը տեսնա՞ս , կրօնք , ճշմարիտ հաւատ-
քը ի՞նչ կ'ընէ զմարդ • քիչով շատերուն
կը յաղթէ , տկարներով հզօրները : Դու
գիտես , թէ քանի՛ քանի մեծամեծ բեր-
դեր միայն աղօթելով և խաչին նշանաւ
ինկան կործանեցան : Դու իսկ գիտես
Ամասուենին Առանձար , այն խաչիւ պսա-
կեալ նահատակն , ինչ յաղթանակներ
վարեց Հերայ բանակին մէջ :

Ազգ մը՝ որ ոչ թաղաւոր ունի , ոչ
ընկեր , ոչ պաշտպան և ոչ ասպաւէն ,
այսպէս ոգեւորուած լեռն ու ձոր թըշ-
նամուոյն դիակներով լեցոյց , ոսոխին ա-
րիւնով ներկեց , և այսօր Աղուանից աշ-
խարհը փրկելու կը վազէ • ահա՛ գնաց
Վարդանն իր բանակով , իմ տէրն Ար-
շաւիր անոր նիզակակից : Ես գիտեմ , ես

կը հաւատամ իմ Աստուած, որ պիտի
լսեմ թէ՛ Հայերն այն տեղն ալ քաջացան,
Հայեր Պարսից յաղթեցին, Հայեր Ա-
ղուանք փրկեցին :

Բայց քոյդ Միւնեցին, քոյդ անիծեալ
Վասակը, դեռ կը շարունակէ՛ իր ամ-
բարչտութիւնը, իր գազանութիւնը .
դեռ ուրացութեան պատմուճան վրայէն
չը մերկացաւ . խարեց զԱստուած, եր-
դուաւ և ստեց սուրբ Աւետարանին, և
այսօր Միւնեաց որդիք, արքունի զօրքը
իւր ձեռքն առած, աւեր, գերութիւն,
պղծութիւն, ստութիւն, սպանութիւն
կը գործէ իր եղբարց մէջ, իր հայրենեաց
մէջ . Վասակին սատակումը ես պէ՛տք
է տեսնեմ :

ԶԱՐԵՀ

Վահէ, դու գիտես որ ես վաղ ձգեք
եկեր եմ Վասակայ ծառայութենէն .
բայց այս մասին մէջ, իմ խորհուրդս
ներէ՛ որ քեզ յայտնեմ :

Վասակ խիստ քաղաքագէտ և խե-
լացի և Ազգին փառաց նախանձախնդիր
մէկն է . Վասակայ ըրածները Հայաս-
տանին բարիք են . եթէ Վարդանն և

Արշաւիր և Ներշապուհ և միւս նախա-
րարներ չք խաբուէին քահանայից , այլ
առ ժամանակ ընդունէին մնային մոգու-
թեան մէջ , եթէ այն սարսափելի Չարդը
մոգաց և դորաց չք տային , այսօր Հա-
յաստան իր կորսընցուցած իշխանութիւ-
նը ձեռք բերած էր . ի՞նչ մեծութիւն
քան զթագաւորութիւն , ի՞նչ ցանկալի
քան զգանձ և պարգեւ . ասոնք ամենը
ո՛չ միայն խոստացած էր Յազկերտ , այլ
և դրկած էր այն մոգաց բազմութեան
հետ . սակայն առ ոտն կոխեց , այս ա-
մէն բարիքներէն և շնորհքներէն զրկե՛ց
Վարդանն զՀայաստանը , և խեղճ ժողո-
վուրդը ետեւը ձգած 'ի մահ կը վարէ ,
մեռցընելու կը տանի բերէ : Այսպիսի
ժամու մը մէջ կրօնք խնդրելո՞ւ է , և
կրօնքի համար Ազգ մը կորսնցընելո՞ւ է .
ահա ա՛յս է քո Վարդան , այս քո քա-
հանայք :

Իսկ Վասակ եթէ տակաւին կը գե-
րէ , կ'ասպատակէ այս տեղէն այն տեղ ,
դարձեալ իր նպատակը շահաւէտ է ազ-
գին . թող կորսուին քանի մը տուներ ,
թող շինուի ամբողջ նայրենիք :

Կեցցէ՛ իմ Վասակ :

ՎՍՉԷ

ի տարտարոս , ՚ի սանդարամետ , ՚ի
գող Բէլիարայ , և անոր մարմինն անգամ
Հայաստանի սուրբ հողին շարժանանայ .
շուներ լափեն անոր դիակը , որդեր ե-
ռան անոր կոկորդին մէջ , պայծի գար-
չելուոյն որովայնը , ապականի անոր ողջ
անձը , տեսնեն զինքը անցաւորներ և
նզովք կարգան անոր , տեսնեն և զթա-
խանակ կարեկից լինելու ռանհար լինին ,
պատմեն իրարու , և առակ նշաւակ հա-
մարուի ազգաց և ազանց մէջ . առնն՝
Վասակայ արժանի վախճան . ահա՛ ըզ
Քրիստոս ուրացող , ահա՛ հայրենեաց
դաւանան , ահա սուրբ Եկեղեցւոյն թըշ-
նամի , ահա ճշմարտութեան հակառա-
կորդ , ազգին մատնիչ , եզրարց խողխո-
ղիչ , կեղծաւոր , մտուաւէր : Վասակն
իւր Աստուածը ուրացաւ որ զինք ատեղ-
ծեր էր . Վասակն զՔրիստոս անարգեց ,
որ զինքը իւր Աստուածային արիւնով էր
ներկեր . սուրբ Աւագանը մուացաւ , որ
զինքը երկնից էր որդեգրեր . բոլոր շը-
նորհքներէն մերկացաւ , որով ինք պատ-
կեր Աստուծոյ և ժառանգ Արքայութեան

էր եղեր . Վասակը սուրբ եկեղեցին ապականեց , որով ինքը օրհնուած էր . Վասակը պիտի չապրի իբրեւ մարդ , և անոր մահ չարաչար պիտի լինի :

Մարդ որ իր կենսատուն կը մերժէ , իր եղբայրները կը դաւաճանէ , իր ծնողը կը մեռուցանէ , իր բարերարները կը մատնէ , հաւատարմութիւն , ճշմարտութիւն , սէր , գութ , և ամէն կերպ մարդկային ու քրիստոնէական սրբազան ձիրքերը ու պարտքերը իր հոգիէն կը թօթափէ , Հայեր խնայեցին իրեն . նանկութիւն գործեց , սուրբեր ողորմեցան իրեն . նա այնպիսի սոսկալի ոճիրներ գործեց , նա Աստուծոյ ահաւոր ձեռքէն սարսափելի և հանդիսաւոր հարուած կ'ընդունի : Ո՞վ չէր գիտէր այդ օճին խորամանկութիւնը , բայց ներեցին իրեն , և դա այնչափ երախտեաց դէմ անոնց ընտանիք գերի կը վարէ : Թող գայ միանգամ , թող մօտ գայ Աամսարականի տան , Վահէն պահեր է անոր արեւուն հարիւր կշիռ վաղակաւորն :

Եւ դու Չարեհ , արդարեւ Վիւնեցի , օգտակար կը համարիս Հայաստանին համար այդ խորհուրդ . ու ինքն բարի

ու շնորհալի մարդ քան զՎարդանն :

Ի՞նչ համեմատութիւն . Վարդան՝
Գաբրիէլ, Վասակ՝ Սաղայէլ : Նման է ճիշդ
քո բան եթէ մէկը բարի ասէր չար սա-
տանային որ խոստացաւ Աղամին Աստ-
ուած լինել , և խարեց զրկեց զնա իր
բարիքներէ : Յաւիտեան դատապարտեալ
դեւն , յաւիտեան դատապարտեալ Վա-
սակն :

Միթէ կը փոխարկէ՞ մարդ իր լուսա-
տու աչքը անարդ մետաղին հետ , կեան-
քը հանդերձի հետ . հաւատքը կը փոխ-
ուի՞ դանձին հետ , եկեղեցին երկրաւոր
պարգեւաց հետ :

Գնա այդ յիշատակարանը ուրիշ եր-
կիրներ փնտրէ , առաքինի Հայն այդ
վատութիւն չըներ . դնա՛ Վասակայ ճակ-
տի վրա՛յ կարդա այդ սեւ մահարձան .
Վարդան սուրբ է . և եթէ մեռնի նա ,
մեռնի Վարդան , կրկին պիտի կանգնի
Հայաստան :

ԶԱՐԵՀ

Ապագան կը վճռէ . երբ այս մրրիկ-
ները դադրին , այն օր կը կարդանք մեր
կարծեաց վճիռը :

ՎՍՀԷ

Հաղարաւոր տարիէն ետքը եկող հայկական սերունդին սրտէն կը կարդամ իմ վճիռս, Մատիսի անմահ կողերուն վրայ կը քանդակեմ ես Վարդանայ անուն . եկող Հայեր թող կարգան թէ՛ Վարդանն և ճշմարիտ Հայեր յանձն առին Եկեղեցին և Հայրենիք փրկելու համար մեանիլ : Թող կարգան՝ Վասակն ու իրեն նման նենգաւորներ յանձն առին իրենց ճակատք պսակելու համար , գանձ և պատիւ տառնալու համար զՍատուած ուրանալ , եկեղեցին սպանել , հայրենիք կործանել :

Քահանայք թող կարգած թէ՛ Ղեւանդն և Յովսէփ Քրիստոսի հաւատքը պահպանելու համար , ազգը յաւիտենական կորստենէ փրկելու համար Վարդանին աջակից , Հայոց մարտագիր եղան , յանձն առին սուրին դէմ իրենց կուրծքն ու պարանոց պարզել : Թող կարգան՝ Պետրոս և Չանդակ երէցներ Վասակին արբանեակ եղան , յանձն առին կամաւ երկնաւոր և անմահ պսակէն զրկուիլ , երկրաւոր փառաց և մեծութեան հաս-

նելու համար սուրբ հաւատքն ատել,
եկեղեցին արիւնով ողողել :

Այ, Յագիերտ, ո՛չ, դու կարող չէ-
իր Հայաստանին մատ դարձել եթէ վա-
սակ քեզ չառաջնորդէր : Եւ ոչ դու
վասակ, դու կարող չէիր եկեղեցւոյն
մաս մը բերել եթէ սուտ քահանայք
քեզ չէին ծառայէր :

Ո՛վ քահանայութիւն, որ 'ի սուտն
և յաղիղ միանգամայն դորաւոր ես :

Երկու քար ալ արձակենք Յունաս-
տանի ճակատին, որ մոռացաւ Քրիստո-
սի սէր, թողուց եկեղեցւոյ սուրբ ուխ-
տը, նախապատուեց իր շահն, փոխա-
նակ Հայոց օգնելու, դաշինք կուեց մոխ-
րազօշտին հետ : Թող մնայ, Յունաստան,
այս ալ քո նենգութեան յիշատակ թող
մնայ Հայաստանի մէջ . Քրիստոս գտնէ
զքեզ, Հայերն ալ թող ճանաչեն զքեզ :
Ահա 'ի Քրիստոս եղբայր, բայց 'ի հա-
ւատս օտար :

Հայեր, դուք էք ձեր ապստէն, օ-
տարին չը յուսար բնաւ . երբ կուտիք

կամ կ'ապրիք՝ օտարին ձայն մի՛ տաք :
Մտէք ձեր եկեղեցւոյ մէջ, յուսացէք
ձեր հաւատքը, կանչեցէ՛ք զԱստուած,
նա միայն է հաւատարիմ ձեզ, նա միակ
պաշտպան ձեզ :

ԶԱՐԵՀ

Արդարեւ հաստ կող և յամառ Հայ
ես եղեր, վահէ, և քեզ պէս կը տես-
նամ ահա բոլոր Հայերը. եթէ քիչ մը
քաղաքագիտութիւն գիտնայիք, եթէ քիչ
մը իմաստասիրութիւն ունենայիք, աշ-
խարհ ու մարդ ի՞նչ են հասկըցած լինէիք,
այսօր և այսուհետեւ երջանիկ մարդիկ
էիք : Ազգ, հաւատք, հայրենիք, այս ե-
րեք բառերն են ահա՛ որ բոլոր մար-
դիկ մարդոց թշնամի են ըրած, ընկեր
ընկերին ատելի, նման նմանին հալածիչ .
և վերջապէս քանի՛ անգամ որ այս բա-
ռեր հնչուեր են մարդոց բերնէն, այն-
քան անգամ արիւնհեղութիւն ըրեր են
մարդիկ իրարու դէմ :

Ի՛նչ ազգ : Ուր տեղ որ գտար մէ-
կը քեզ բարեկամ, ո՛ր մարգը զքեզ սի-
րող, այն քո Ազգն է : Ամէնքս ալ Ար

դամորդի չե՞նք, մէկ արիւնէ և մէկ հօ-
րէ յառաջ եկած չե՞նք :

Ի՛նչ հաւատք: Ո՛ր կրօնք որ քեզ հեշ-
տալի կը թուի, որ զքեզ կը մեծացնէ,
որ զքեզ կը փառաւորէ կը բերկրեցընէ,
որ կարօտ զքեզ չը թողուր, որ անխը-
տիր վայելել կուտայ արարածոցս ամէն
բան ինչ որ կ'ուզէ մարդկային բնութիւն,
որ չի պատժեր, որ չի սպառնար, որ չի
թշնամաներ, այլ միշտ կուտայ և կը ներէ,
այն կրօնք քեզ համար կրօնք համարէ :

Ի՛նչ Հայրենիք: Ուր տեղ որ հան-
գիստ, պատիւ, ճոխութիւն, վայելք
կը գտնես, այն քո հայրենիքն է: Միթէ
այս հողն ու այն հող մի և նոյն Աստ-
ուած չէ՞ ստեղծեր :

Այսօր Պարսիկն այն ազդեցութեան
տէրն է, որոյ զօրութիւն ծագէ 'ի ծագ
երկրի տարածուած է. այսօր խելացի
մարդ կը խառնուի անոր հետ, կը միա-
նայ անոր հետ, ազգը՝ անոյ՝ ազգ պէտք
է լինի, կրօնքն՝ անոր կրօնք կ'ընդունի.
և յայնժամ իրեն համար հայրենիք
է՞ ինչ տեղ որ լինի: Այսօր Պարսկին,
վաղն ալ այն ազգին որ մի և նոյն ազ-
դեցութիւն կ'ունենայ :

Յազկերտը բարերար կը համարիմ ես
Հայաստանին, որ սրկելոյն այց կ'առնէ,
անկելոյն ձեռն կուտայ, մերկացելոյն
գանձ կը բաշխէ, տկարն կը յարուցանէ.
սակայն անմիտ Հայեր իրենց օգուտը
արհամարհելով, փոխանակ անոր ջը-
նորհքները ընդունելու, անոր սուրն թ-
րեաց վրայ կը հրաւիրեն և իրենց պա-
րանոցը զերման կը նուիրեն :

ՎԱՀԷ

Ամբարշտնդա՛ր, Զարեհ, անդդամա-
ցար քան վշտիմ առաւել :

Յազկերտին ո՛չ խորհուրդ և ոչ դործ-
քեր նրբէք բարի են, սակայն ամենա-
բարին Աստուած անոր շարութեանց
վրայ բարիք կը կառուցանէ. Յազկերտ
Քրիստոսի եկեղեցին քակել կը կարծէ,
ընդ հակառակն ինքն իր ձեռք նորէն
կը շինէ, նորէն կը հաստատէ :

Յազկերտը Հայաստանէն Քրիստոսէ ու-
թիւնը բառնալ կը կարծէ. ընդ հակառակն
'ի նորոյ անոր սէրը ամէնու սրտն մէջ կը
զարթոցանէ, ամէնու հոգւոյն մէջ կ'ար-
ծարծէ :

Յազկերտը սուրբ հաւատոյ կեա և

Հայ անուն, Հայ ազգը, Հայաստան կոչումը կը կարծէ ջնջել, Պարսից գաւառ, Պարսից մասն կ'ուզէ անուանել, ինչպէս որ դուն ալ կը կարծես, Չարեհ, այլ ընդ հակառակն այս ազգը իր սեփական Հայկական անուամբ 'ի նորոյ կը պըսակէ, այս աշխարհը իր ազատական և անմահական անուամբ 'ի նորոյ կը յորջորջէ :

Այո՛, ազգի մը վրայ հալածանք հանել՝ այն ազգին կեանք զարթուցանել ու անոր սրտին մէջ պահուած կրակ բորբոքել է : Ժողովրդեան մը հայրենեաց թշնամութիւն ընել՝ անոր ծոց ննջած առիւծները գրգռել, անոր լեռն ու ձոր կենդանացընել, անոր ջուրն ու հող կատուեցընել ու իր վրայ յարուցանել է :

Առաւել ևս հաւատոյ հալածիչները, որք երբ իրենց որսական գործիքներ և զէնքեր առած կ'ընթանան եկեղեցւոյն վրայ, հոն երամացած խաղաղիկ մնջիկ նստած միամիտ աղաւնիք՝ մէյմէկ հրացայտ վիշապներ կը տեսնեն, որոնք շչաւով, գոռալով կը յարձակին՝ Յաղթանակ կրօնից, յաղթանակ ազգային, յաղթանակ հայրենեաց՝ որոտալով. և այս ձայ-

ներն ու գոչումն կը կրկնեմ այս տեղ ,
որ պատուի՛ քո սիրտը , Զարեհ , քո սիր-
տը որ լցուած է անկրօնութեամբ , ցամ-
քած է ազգասիրական զգացմունքներէ ,
և հայրենեաց գութ ու յարգանք բնաւ
չունի իր մէջը :

ԶԱՐԵՀ

Թող վահէին մահ և թշուառութիւն
լինի բաժին , իրեն հետ և իրեն պէս
անմիտ Հայերուն . այո՛ , թող Քրիստոս ,
Հայ և հայրենիք կանչեն ու իյնան մեռ-
նին . սակայն Զարեհին պսակ , գանձ ,
արեւ , առիւծանշան , ոսկի , կին , տուն ,
ծառայ , կեանք , խրոխճանք , վայելչու-
թիւնք ու բերկրանք :

Թող վարդանայ հետ վահէն մտնէ
գերեզման , թող վասակայ հետ Զարեհ
թագաւորէ Հայաստան :

ՎԱՀԷ

Այո , թող մեռնիմ ես վարդանին
հետ , զոր երկինք , հայրենիք և ապա-
գայ Հայոց սրտերը պիտի պատուեն ան-
մահութեամբ : վարդանն եթէ մեռնի ,

Վահէն եթէ մեռնի, հայրենիք և սուրբ
հաւատքը պաշտպանելու համար կը մեռ-
նի, և անոնց արեան կաթիլն անգամ-
զուր չանցնիր. անոնց ոսկորներէն ու
արիւնէն առիւծի կորիւններ կը յառ-
նեն

(Ներսէհ և Հրահատր կո- ֆան ներս .)

Ա՛հ, վատ Չարեհ, նայէ՛ այս հրեղէն-
ները . (Նեւերսան որակ կ'առնէ Գգո-անօտ .)
ասոնք կամսարականի արիւնն են . Ար-
շաւիրն ասոնք ծներ, Աստուած Արշաւ-
րին ասոնք տուեր է, որ Հայաստան ա-
սոնցմով պաշտպանուի, փրկուի և ու-
րախ լինի . ասոնք կը սնանին Յաղկերտի
թոռներուն մահարեր :

ՆԵՐՍԷՆ ԵՒ ՀՐԱՀԱՏ

Հայր, վահէ, շեկա՞ւ մեր հայրիկ,
շեկա՞ւ մեր վարդան քեռին : Զէ՞ մեզ
կ'ըսէին, Արագածին ծաղիկները չը թա-
փած կը դառնանք, Երասխին ափերը
չիջած, ջուրը չը նուաղած՝ կը դառնանք .
ահա՛ արագիլն ալ դնաց, ահա բուրաս-
տանն ալ կը խամրի, և ծառերն ու որթը
իրենց պտուղներ հասուցին, հաւքեր կը


քաշուին իրենց երկիրները, մեր հայրիկն
ո՞ւր մնաց, չը դարձաւ տակաւին :

Վահէ, ասա մեզ, ի՞նչ լուր ունիս,
ե՞րբ կուգայ վարդան և ե՞րբ Արշաւիր
ասա՛ զարդարուինք, մեր թուրեր կա-
պենք, մեր զէնքեր հագնինք, սաղաւարտ
դնենք, նժոյգներ հեծնենք, կտրի՛ճ Հա-
յոց հետ մէկտեղ դէմն ելնենք .

ԶԱՐԵՀ (Երժասլով)

Խեղճ տղաքներ, անխիղճ ծերունի .
Արշաւիրն ալ ո՞ղջ կը դառնայ . վար-
դան ալ արե՞ւ կը տեսնէ . անոնք ար-
դէն Աղուանից լալկաններուն ձեռքն են,
անոնց դիակներուն վրայ ողբեր կը կար-
դան . Վասակն դանոնք խեղդամահ ը-
նել տուաւ :

Խե՛ղճ տղաք, անհայր մնացիք, անհայր :



Յանկարձ ԿՂԵՐԻՆ Ժ,
ԵՒ ՔԱՆԻ ՄԸ ՀՈԳԻ ԵՐՈ ԿԵ ԵՊՆԵՆ :

— Ողջոյն քեզ վահէ,

Կեցցէ՛ Հայաստան,

Կեցցէ՛ մեր հաւատք,

Կեցցէ՛ Մամիկոն վարդան :

Կեցցէ՛ Արշաւիր Կամսարական :

Յաղթեց Հայն ,

Փրկեցաւ Աղուան ,

Խորտակեցաւ Պարսիկ ,

Բարձրացաւ սուրբ Խաչն ,

Կործանեցաւ Ատրուշան :

Կուգայ Հայոց բանակն աւարաւ ,

Կուգայ ցնծութեամբ և յաղթանակաւ ,

Ձէնք , սուր , գանձ , գերի , և մթերք ,
անթիւ ,

Կուգան զԱստուած օրհնելով և աղա-
ղակաւ :

Փախաւ օձն վասակ , փախաւ ծակէ
ծակ ,

Տարած գերիներն և աւար թողած .

Ահա՛ ընտանիք մեր նախարարաց ,

Ահա՛ տարած գանձն ամէնքն ետ կուգան :

Եւէք , վահէ , ըշտապ վազեցէ՛ք ,

Քաջաց դէմ գնացէ՛ք , բանակ դիտեցէ՛ք .

Թնդացին լեռներ , շարժեց դաշտն ու
ձոր ,

Երբ տեսան Հայոց հանդէս փառաւոր :

(Ներսէհն և Հրահաթ իւրացրան դէպ 'ի
բուն իւրեմն , վահէն ցնծութենէն արտա-
օտ իւր հեշտ , և սրբէ իրակէն կարգածի պե-

իւ շարքը կը նայի : — Չարեհը լսել է դեզնած
դեմոզ դուրս կը սողսկի : ՎԱՀԷ, լեզուն
կարկամածի պէս թիւ ճը կը լսէ յայսինչս յայնինչս
նայելով, և յանկարծ կ'աղաղակէ.) — Ո՞ւր կու-
րաւ, ո՞ւր գնաց, ո՞ւր է անզգամն, Չա-
րեհն ո՞ւր է . այսօր, այս տեղ մատաղ
պէսք է անել անոր արեւը՝ Հայոց քա-
ջութեան, խաչին յաղթութեան, հայ-
րենեաց փառաւորութեան : Սո՛ւր մը ին-
ձի, Չարեհն ինձի, բերէ՛ք, բերէ՛ք . . . :

Աստուած Գրիգորի, Աստուած Ներ-
սիսի, Աստուած Սահակայ, Աստուած
Վարդանայ, Աստուած Հայաստանի, քեզ
իմ խոնարհ երկրպագութիւնն գոհու-
թեամբ սրտի կը մատուցանեմ :

Դու ալ, ո՛վ Մասիս, քո տխուր ոգին
իմ խռովեալ ոգւոյն հետ ցնծութեան
փոխէ : Արագածն ու իր ճեղքած դա-
գաթ, Արարատն ու իր պատուտած սիր-
տը, իմ բեկեալ երիկամանց հետ թող
երկնից ցօղով զուարթանան :

Հոսեցէ՛ք, ջրեր, Երասխին ափեր,
հոսեցէ՛ք, իմ աչքեր, ուրախութեան
արցունքներ :

Նաւակատիս թող կատարեն, օրհնեն

զՏէր բոլոր Հայեր . կաթընկերն մինչեւ
գերեզմանին ծերը , օրհնեցէ՛ք զՏէր , և
ցնծացէ՛ք անոր առջեւը : Ձեր պաշտած
կրօնքը սուրբ էր . հզօր էր ձեր հայրենեաց
և ազգին սէր , յաղթեցիք և պիտի յաղ-
թէք . կրօնից և միութեան սէրը ճանչցէ՛ք ,
զայն պինդ պահեցէք :

Օրհնեալ է սուրբ Խաչն , օրհնեալ և
խաչեալն Ամսուած :



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Գ. ՄԱՍԻՆ

Վարդանայ և Մուշկանայ մեծ պատերազմը կատարուեր է . Շաւարշական դաշտը արիւնով և դիակներով լցուած , Վարդանը իւր հայրենասիրութեան և Քրիստոսասիրութեան նահատակութեան սուրբ պսակն ընդունած է իւր քաջ նիզակակցաց և առաքինի ընկերակցաց հետ մէկտեղ . ողջ մնացած նախարարք Հայոց՝ ամրացած Հայաստանի այս և այն բերդերու լեռներու և ամրոցներու մէջ , ու կը կռուին կը զարնեն , կը յաղթեն դեռ եւս Պարսկին : Վասակը՝ սուտ երէցներով և խաբեքայ ուրացող նախարարներով մէկտեղ կը շրջի ամեն կողմերը , սուտ յոյսեր տալով և մեծամեծ խոստումներով խաբելով , շատ տեղ պաշարում և բռնութիւն և աւեր և հրձիգ ընելով :

Ներշապուհ Արծրունին , սուրբ ուխտին մեծ նախարարներէն էր , և պատ-

տերազմներուն մէջ կտրին ճակատամարտ,
քաշուած իր բուն հայրենեաց մէջ 'ի վաս-
պուրական յճատան քաղաք, այն տեղ
քաջութեամբ կը կռուէր Պարսից դէմ,
կը վանէր զանոնք, կը հալածէր մոզն ու
մոգպետը, կ'սպաննէր կրակն ու կրակա-
պաշտները, և Ռչտունեաց սուրբ Սա-
հակ եպիսկոպոսին հետ կը պահպանէր
կը սրբագործէր այն սահմանները: Այս-
պիսի գործողութեանց հետ մէկտեղ
Ներշապուհի միտք և հոգին անդադար
կը յիշատակէր վարդանայ և անոր հե-
տի առաքիներաց անունը, կեանքը, գոր-
ծը և փառաւոր մահը. և ահա այս ըզ-
գացմունքն ու յիշատակն է մեր եր-
րորդ գրուածոյն դուռը:

Ատովմ Ներշապուհին որդին կը դառ-
նայ հօր մօտ, պատմելով իր ըրած սըր-
բազան քաջութիւնները և կոտորածնե-
րը Պարսկին, որոցմով կը փառաւորվի
հայրը և կը խրախուսէ ու կրկին կը վա-
ռէ զորդին 'ի վրէժ Պարսկին և ուրա-
ցող Հային:

Շաւասպ, Ներշապուհի հաւատարիմ
և ծեր զինակիրը կը դառնայ Ներշա-
պուհին մօտ, որ Շաւարչանայ մեծ պա-

տերազմէն գկնի միւս Հայ նախարարաց
հետ խաղտեաց լեռներուն ամրոցնե-
րուն մէջ անոնց հետ մէկտեղ կ'ամրա-
նար ու կը պատերազմէր Պարսից դէմ
չատ քաջութիւն դործելով, կը դառնայ
ողջանդամ շրջելով շատ տեղերէ՝ կը հաս-
նի իւր տիրոջ մօտ, և կը պատմէ իւր
ըրաժները ու տեսածները, որով կրկին
կը վառի Ներչապուհին հոգին 'ի վրէժ
Պարսկին և Վասակին: Հրաման կ'ընէ իւր
գաւառներուն որ բանակ կազմեն, պատ-
րաստուին երթան Հմայեկին մօտ խաղ-
տեաց լեռներուն մէջ, նոր կռիւ, նոր
մարտ յարդարել. և ահա ձայն, լոյս, ա-
նուշահոտութիւն, հրեշտակաց տեսիլ,
Վարդանանց հոգիք կ'երեւան յերկինք,
որ Հմայեկի սուրբ հոգին առած՝ օրհներ-
գութեամբ և փառօք կը թռչին առ
Աստուած: Կ'իմանան թէ մեռած է Հը-
մայեակ: Ողբերգութիւն:

Գ. ՄԱՅՆ

ԵՐՐՈՐԳ ՏԵՍԵՐԱՆ

Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՆ Ի ՅՈՍՏԱՆ

—

ԱՐԾՐՈՒՆԻՆ ՆԵՐՇԱՊՈՒՀ

ՎԱՐԴԱ՛Ն .

ԽՈՐԷ՛Ն .

ՀՄԱՅԵԱ՛Կ .

ԱՐՏԱ՛Կ .

ՏԱՃԱ՛Տ .

ՆԵՐՍԷ՛Հ .

ՎԱՀԱ՛Ն .

ԱՐՍԷ՛Ն .

ԳԱՐԵԳԻ՛Ն .

Ո՛վ անմահ անուաններ . . . : Քաջ, կորու-
վի, արի, զարմանալի, իմաստուն, հրաշա-
կերտ, վեհ, ցանկալի, յառաջադէմ . . . :
Առաքինիք, ո՛վ իմ ընկերներ, մեռած
և միշտ կենդանի Հայեր, ո՛վ երեսուն
ու վեց և հազար Հայ նահատակներ :

Աւարայրի , Աւարայրի , դաշտ գե-
րեզմանական , դաշտ նուիրական . քո
հողդ սուրբ է այսուհետեւ , դու քան
զերկինքն եղար առաւել : Քոյդ ծոց ննջե-
ցին Հայոց արեգակներ , անոնց մարմին-
ներուն վրայ ելելէջ կ'անեն Աստուած
և հրեշտակներ . ալ պէտք չեն քեզ հա-
մար ցգղ և անձրեւներ . ալ Հայոց համար
ծաղիկ մի' ծլիր . թող գան , թող գան
Հայոց աղջիկներ , քեզ մէջ չըջելու , վարդի
տեղ վարդան խնդրելու , քաղցր մանու-
շակի տեղ Հայոց արիւնը հոտոտելու :

Իրենց կուսական ճակտին պակ , իրենց
գեղեցիկ պարանոցին մանեակ՝ թող փո-
խանակ շուշանի՝ Հայոց քաջաց փշրուած
ոսկորներ հիւսեն . և երբ ծիծեռն ու
սարեկ կու գան քո կանանչներուն մէջ
գարունը գեղդեղել , թող Հայոց մանկ-
տին ուսանի անոնց հետ կանչել յեղյե-
ղել , արձագանք տալ և առնել , վար-
դան , խորէն , Արտակ , Ներսէհ , Հմայ-
եակ , Տաճատ , Արսէն , վահան , Գա-
րեգին , և երեսուն ու վեց և հազար
Հայեր , Հայաստանի սիրոյն , փառաց և
կենաց ընտիր մատաղներ :

Դու Տղմուտ , միշտ պղտոր մնաս ,

սղտոր ընթանաս . ինչ որ քո աչքովդ և
քո շուրջ տեսար , բնաւ չը մոռանաս .
քեզմէ ջուր խմողին՝ Վարդանայ համը
տաս , քոյդ տխուր պատկեր քոյդ մանրիկ
ու մեղմ ալեաց վրայ գրուած յիշատակ-
ներ ամէն Հայուն կարդաս , և վկայես ,
թէ՛ ինչպէս քո ցուրտ ծոցին մէջ , քոյդ
թաց աչքերուդ առջեւ քաջացան , կրու-
ուեցան , հայրենեաց և սուրբ հաւատոյ
համար ամէն բան մոռացան , զարկին ,
զարնուեցան , փռեցին , փռուեցան , թըշ-
նամին ջարդեցին , ու իրենք ինկան ,
Աստուած սիրող Հայեր , հայրենիք սի-
րող Հայեր , և իրենց զօրավար Մամի-
կոնեանն Վարդան :

Քեզ անէծք , ո՞վ Տղմուտ , եթէ մո-
ռանաս այս իմ ուխտ : Խցուին , ցա-
մաքին քոյդ աղբերակունք . զքեզ տեսնեն
օրինակ առնեն հայրենիք մոռացողք , Հա-
յութիւն ուրացողք :

Այլ դու մի՛ լար Հայաստան . թէ մե-
ռաւ Վարդան , բայց զքեզ սիրող , քեզ
պաշտպան Հայեր տակաւին շատ կան ,

Վերջինն քան զամէն Ներշապուհն է ,
բայց իմ երեսին դեռ բոլոր Պարսիկ սար-
սափ կը կրէ :

Հողմո՛ւնք հայրենեաց, քանի կը փչէք
 'ի Շաւարշան դաշտ, բերէ՛ք այն տեղէն
 ամէն Հայերուն հոգի վարդանանց : Ար-
 ձագանք տուէ՛ք, ուսէ՛ք և կանչէ՛ք Ար-
 տոսայ բարձունք, վարագ, կորճեայք,
 և քարինք Մոկաց, Հայերը վառեցէ՛ք 'ի
 բոց 'ի նախանձ, 'ի վրէժ վարդանայ,
 'ի վրէժ Հայ քաջաց, հրապաշտ Պարսից
 ճեա ջնջել 'ի վրէժ հաւատոյ, 'ի վրէժ
 հայրենեաց :

Ո՛վ Աստուած, ո՛վ Աստուած :

ԱՏՈՎՄ

Հա՛յր իմ Ներշապուն :

ՆԵՐՇԱՊՈՒՆ

Արդեա՛կ իմ Ատովմ

— բայց ի՞նչ է այդպէս արիւնոտ սլառ-
 մուճանդ, քրտնած քոյդ ճակատ՝ Ատովմ.
 ո՛ւր տեղէն կու գաս :

ԱՏՈՎՄ

Այն տեղէն, ուր մեր բանակն է .
 քառսուն սեւ Պարսիկ մէկ ձեռքովս այս
 մէկ սուսերով շան սատակ ըրի, չորս առ-

բուշան միւս ձեռքս կործանեց . պիղծ
կրակն 'ի ծով գլորեցինք , տասն և ութ
քուրմեր , մոգ և մոգ պետներ ողջ ողջ
թաղեցինք :

ՆԵՐՇԱՊՈՒՀ

Բե՛ր համբուրեմ , Ատովմ , քոյդ ազ-
նուական ճակատը , բեր օրհնեմ որդեակ ,
քոյդ յաղթական բազուկը : Այսօրուրնէ
քեզ կու տամ իմ բոլոր գէնքերս . քեզ
ընծայ կու տամ , քեզ կտակ կու տամ
այն գէնքերը , որ բնաւ չեն սորված
դադրիլ , երես դարձունել , այլ միշտ
զարնել , միշտ ջարդել Պարսիկ , չար մար-
դիկ , սուտ եղբայրներ , կեղծաւոր քրիս-
տոնեայք , խարող ընկերներ , հայրենեաց
դաւաճանք , հաւատոյ թշնամիներ : Ա-
տովմ , որդեակ , եթէ մենք խաբուեցանք
Վասակէն , եթէ Վարդան և սուրբ քա-
հանայք ներեցին այն չարին , երբ ձեռք
կը դնէր սուրբ Աւետարանին , բայց քեզ
անմոռանալի և սուրբ կտակ մի կը նը-
ւիրեմ ահա՛ , չը խաբուիս դուն ալ , թէ
Վասակ և թէ իւր սուտ երէցներ , ուր
որ կը տեսնես զա՛րկ մեռցուր , շուներուն
սուր անոնց ոսկորներ :

Դու կը տեսնայիր, Ատովմ, թէ ի՞նչ կրակ ու բոց կտրած էի այն քանի անգամ, երբ վասակ կ'երդուէր. հազար կտոր կ'ուզէի ընել, բայց . . . բայց . . . բայց . . . ո՛վ Աւետարան, և սուրբ քահանայք :

Դու տեսար թէ ի՞նչպէս ստեց, ի՞նչպէս քակեց . սպաննեց Հայաստանի քաղեր, աւեր դարձոյց հոյակապ և սուրբ տաճարներ : Գիտեմ, գիտեմ, վասակայ դատաստան մեծ կ'ընէ Աստուած, և զայն պիտի տեսնեն մեր աչքեր, բայց քեզ կը պատուիրեմ, և ասա՛ դու քոյդ զաւակաց, և զաւակներդ իրենց զաւակաց, թող չը խնայեն, չը խաբուին իրենք ալ վասակայ հոգի Հայերէն : Ա՛հ, ամէն ազգն իր վասակն ունի, ամէն ժամանակ Հայն վասակ ունի :

ԱՏՈՎՄ

Հա՛յր իմ, Ատովմը Ներշապուհի զաւակն է, քոյդ արիւնն է, Ատովմն ալ Ներշապուհ է : Ատովմը կ'ուխտէ չը մոռանալ իր տեսածները, չը մոռանալ իր լսածները : Եւ դու քաջացիր, Արծրունեանց առիւծ, որ երեք երսուն տարիներ

անցուցած ես գլխովդ , և միշտ յաղթու-
թեամբ , միշտ Աստուծոյ և Հայաստանին
համար արիական նուիրական պատե-
րազմներով սրակած ես քոյդ գագաթը .
կ'երդնում սուրբ խաչին վրայ , և այս
ազի ծովն ու կապոյտ երկինքը՝ վկայ կը
բռնեմ բանիս , արեանս վերջին կաթիլ,
անձինս ամէն սիրածները , սրտիս բոլոր
իղձերը զոհել , քոյդ առաքինութեան յի-
շատակը , հայրենեացս փառքը և սուրբ
կրօնքս պաշտպանելու համար :

Ձեր գերեզմաններ , հայր իմ , մեզ և
մեր ապագայ սերնդոց անմահութեան
պատճառ են . Շաւարշանայ հողը համ-
բուրել , Տղմուտին ջուրը խմել , կենաց
կենդանութիւն են Հայութեան . և այս՝
ձեր փոշիներէն պիտի հանէ Աստուած
ձեր հողւով Հայեր , որք առ հասարակ
վրէժխնդիր լինին Յագկերտին ու Վա-
սակին , իւրաքանչիւր Հայն իւր դարու
թշնամւոյն , իւր դարու Վասակին :

ՆԵՐՇԱՊՈՒՀ

Եթէ , Աստուած չը կամեցաւ իմ ա-
րիւնս խառնել այն սրբոց արեան հետ ,
թող ընդունէ իմ ցամքած աչքերէս հո-

սած արցունքներ, զորս կը հեղում սուրբ
եկեղեցեաց վրայ, կը հեղում Հայոց ներ-
կայ վիճակին վրայ: Տե՛ս, որդեակ, Հա-
յաստանի քաղաքներ ու շէները բոլոր
ամայացած, նախարարները՝ որը մեռած,
որը լեռներուն գլուխները, ձորերուն
խորշերը փախած, տիկնայք իրենց փափ-
կութենէն ինկած, հարսները առագաստ
թողած, առ հասարակ բերդեր, ամրոց-
ներ, դաշտերն ու լեռները լեցուած խո-
տարուտ կ'ապրին: Եւ գոհ սրտիւ կ'ապրին:

Գոհ սրտիւ կ'ապրինք, և ասոր հա-
մար կը մխիթարուիմ ես: Վասն զի Աս-
տուծոյ համար է այս ամենը: Տեսանք,
այո՛, տեսանք մեք մեր աչօք մեր քաջ
նահատակներու սպանուիլը, մեր սիրելի-
ներուն խողխողուիլը • մեր գանձերը մեր
ձեռքէն ձգեցինք • շատ մայր իր զաւակին
մահը իր աչքին առջեւ տեսաւ • շատ կոյ-
սեր իրենց նշանածը, և շատ հարսներ՝
իրենց փեսայները մեռած թողուցին ու
անցան • շատ ծնողաց գիրկերէն կաթըն-
կեր տղաքներ ինկան ու ալ շունչ չառին •
բայց ամէնքն ալ մխիթարութեան հոգի
զգեցած՝ Աստուած կանչեցին ու այն
ցաւերուն յաղթեցին:

Հացինք մենք միայն և կու լանք մեր
եկեղեցեաց քանդումը . լացինք մենք և
կու լանք եթէ մոռցուին այս մեր կրած
ցաւերուն , այս մեր ըրած գործքերուն ,
և այս մեր ունեցած ու անցուցած օրեա
րուն յիշատակները ապագայ Հայերէն :

Գրեց և կը գրէ Աստուծոյ մատը այս
ամէնը իւր յաւիտենական մատենին մէջ ,
կը գրէ անշուշտ Հայոց պատմութիւնը իբ
էջերուն մէջ , և Հայաստանին հսկող հրեշ
տակը կը քանդակէ զայս Հայոց լեռներուն
ու բլուրներուն վրայ : Ա՛տղաչեմ , կ՛ա
ղաչեմ , քեզ ուղղած խօսքերովս ամէն
ժամանակաց Հայերուն , որ կարդան , ու
սանին , յիշատակեն և տօնեն Հայոց ազ
գութեան այս մահաբեր՝ բայց կենսատու
յիշատակը :

Դեռ կայ , դեռ կայ մեզ շատ չար
չարանք կրել , դեռ կայ մեր եկեղեցեաց
քանդումիլը և սուրբ քահանայից կապանք
ները տեսնել , դեռ կայ մեր ժողովրդոց
գերի վարուիլ , օտարութեանց , ստրկու
թեանց մէջ ջրուիլ , բայց այս ամէնը ո՛չ
ազգ մը ոչնչացընել կարող են , և ո՛չ
եկեղեցին անհետացընել :

Արտասուքս , կակիծս , և երկիւզս

միայն այն ժամանակուայ Հայոց համար է, որոնք հանգիստ և ապահով օրեր կ'ուենեան, բայց զիրենք հեշտութեան, անհոգութեան, անգիտութեան, և անձնասիրութեան տալով կը մոռանան իրենց ազգային կեանքն, ոչ անցեալն յիշեն, ոչ ներկայն հոգան, ոչ ապագան պատրաստեն. այն օրն է ահա՛ ազգութեան մահ, և եկեղեցեաց վախճանը. այն օրն է որ յառաջ կու գան տգէտ ու սուտ եկեղեցականք, այն օրն է որ յառաջ կու գան վատ ու մոլի իշխանք, այն օրն է որ յառաջ կու գան իրենց կամք պաշտօղ կոյր ժողովրդականք, որք առ հասարակ կամ օտարաց անձնատուր կը լինին, կամ ճարտարաց պատրաստական կերակուր : Աշխարհիս շրջանին մէջ, մարդկութեան կարգին մէջ կու գայ ժամանակ մը, որ սուսերին շքրած գործը՝ լեզուն պիտի ընէ, արիւնով ազատուած ու պահպանուած կրօնք ու Ազգութիւն՝ անհոգութեամբ պիտի վախճանը գտնէ :
.

— Այդ ի՞նչ շառացիւն, ի՞նչ դժբաղդ է կը լսուի



ՇԱԻԱՍՊ

(Խառնութեան ճշմարտութեան համար)

Տէր իմ Ներշնչապուհ :

ՆԵՐՇՆՉԱՊՈՒՀ

Ո՛վ իմ Շաւասայ :

ՇԱԻԱՍՊ

Բոլոր Աշտնիք , Տիրիք , և Խաղտիք
ընկերով կու գամ Այրարատու ,
Սիւնեաց , Բարձր Հայոց քաղաքներէն
անցայ , ծուխ և մառախուղ այն ամէն
տեղերուն մինչեւ երկինք կը բարձրանայ .
անորէն վասակ կրակը ձեռքն առած
կը վառէ բոլոր շէներ , և երկու բանակ
հետն առած լեռներ և ամրոցներ կը գի-
մէ . բանակ մը սուտ քահանայից և ու-
րացող իշխանաց , բանակ մը Պարսից սուր-
ու բոց առած , հրովարտակ կը կարդայ ,
Թողութիւն , շինութիւն կը խոստանայ
Հայոց՝ Յազկերտի կողմէն . սուտ երէցներ
կ'երդնուն , ուրացող նախարարք կը յոր-
դորեն , և Պարսիկը զանոնք կը խողխո-
ղէ Դարձեալ արիւն , դարձեալ

պատերազմ, դարձեալ մահ : Կապոյտ լերան Հայերը մեծ ջարդ տուին Պարսիկն, Խաղտեաց ամրականները ջարդ ու փշուր ըրին մնացած Պարսիկները . Բակ Աիւնեցին , այն խաչապսակ քաջագն Հայկազուն՝ մոխիր դարձոյց հազարաւոր ճակատներ , և արիւնոտ սուրը բերան բռնած վազեց ուրիշ կողմեր Հայոց օգնելու :

Անոր հետ խառնուեցաւ գնաց քոյդ արիւնոտ Շաւաապ . գետի մը ափունքներ խումբ մը Պարսիկներ տեսանք , և անոնց մէջէն լալեաց ու հեկեկանաց խեղճ հեծեծանքներ լսեցինք . Հայու ձայն էր մեր լսած , Հայ կանանց , Հայ աղջկանց , Հայ կաթընկեր մանկանց ձայն . . . գերի էին ինկեր թշուառները , և միմիայն իրենց աղաղակն էր « Աստուած » : Ար լռէին և կը մրմնջային վերասին « Աստուած » : « Աստուած » , մենք ալ գոռացինք Բակին հետ , և վրայ հասանք . ջուր , փոս , խորխորատ այն Պարսից բաժին մնաց . և մինչ թափեցինք գերիներ , մէկ գլուխ Պարսիկներէն ողջ չը մնաց : Այլ ի՞նչ տեսարան , ո՛վ ողորմած Աստուած . ջրին հոսանաց մէջ երկու գեղեցիկ կուսանք , իրենց մազերը ջրի երես ծալ 'ի ծալ

փռուած , երկուքը՝ մէկ կապով իրարու
կապած , ելեւէջ կ'ընէին ջրին տակն ու
ջրին երեսը . դեռ շունչ կար իրենց բերնի
մէջ : Տեսանք , վազեցինք զանոնք փրկե-
լու , բայց վերջինն էր այն շունչը . մահը
քան զմեզ շուտ հասաւ . մէկ նուազ ու
անուշ ձայնով մը կանչեցին զԱստուած ,
և հասան առ Աստուած . . . (Բոլոր Գե-
տարանք էք Տարճո՞ւի՞ն և կ'առնէն) Վա՛հ , վա՛հ . . .

ՆԵՐՇԱՊՈՒՀ

Ձինաւորուեցէ՛ք , քաջեր . Շաւասպ ,
մի՛ կայնիր , ձայն տո՛ւր Անձեւացեաց ,
ձայն Մոկաց , ձայն Ռշտունեաց , ձայն
Կորդուաց , ձայն Քաջբերունեաց , ձայն
Բզնունեաց , ձայն Վասպուրականի ամէն
կողմերաց . Թող իջնան ամրոցներէն վար ,
Թող գան ժողովին մէկտեղ . դեռ Հայը
կայ ու կ'ապրի . Թող գան իմ քաջեր ,
բանակ տամ քեզ հետ , Շաւասպ , ա՛ռ
ու հասիր հիւսիսային լեռներ , այն տեղն
է Հմայեակ , այն տեղն Արշաւիր . ասա՛
Թող զօրանան , կռուին , զարնեն , ջար-
դեն , չը Թողուն Պարսկի մէկ վերջին ճիւղը
Այն տեղ սուրբ քահանայներ , ասա՛ Թող
չը բաժնուին ժողովրդեան մէջէն . Թող

օրհնեն զՍատուած, օրհնեն Հայոց զէնքն
ու սուսերը: Ասա՛ թող խրախոյս առնեն.
Ներշապուհ ողջ է, այս կողմերը կը պահէ.
Ատրպատականը ամբողջ ինձմէ կը սար-
սափէ. մէկ բանակ զրկեր իմ Հեր և Չա-
րեւան. ես ալ ահա կ'երթամ. կ'երթամ,
կը յաղթեմ, և կու գամ:

Սատուած, որ կը տեսնէ իր ամենա-
կալ անթուոյն բարձրութենէն այս նա-
հատակութեանց հանդէսը՝ Սատուած պի-
տի տեսնել տայ մեզ վերջապէս մեր ե-
կեղեցեաց շինութիւն, մեր կրօնից ազա-
տութիւն, մեր աշխարհին վերանորո-
գութիւն: Աշխարհ մը, ազգ մը որ ծագէ
'ի ծագ արիւն կտրեցաւ, արիւն Հայե-
րուն ողողեցին բոլոր Հայաստանի դաշտն
ու լեռը, գետերը կարմիր ներկեցան,
դաշտն ու ձորերը դիակներով լցան, չի
մոռցուիր բնաւ այս տեսարան Սատուծոյ
ամենատես աչքէն. անոր ոչ թութիւն պի-
տի հանէ այս հողէն այդ աւերիչ ձեռքը,
պիտի փշրէ այս սուրբ երկրէն այդ ոտա-
րին ոտքը, և պիտի յարուցանէ կենդա-
նացընէ կրկին Հայութիւն, Հայութեան
հետ քրիստոնէութիւն, քրիստոնէու-
թեան հետ ազատութիւն, ազատութեան

հետ անմահութիւն , և

— Այս ի՞նչ անուշահոտութիւնքուրեց :

ՄԻՒՍՆԵՐ

— Անմահութեան հոտ է :

ՆԵՐՇԱՊՈՒՀ

— Այս ի՞նչ քաղցր ձայներ կը լսուին :

ՄԻՒՍՆԵՐ

— Հրեշտակներու եղանակ է :

ՆԵՐՇԱՊՈՒՀ

— Այս ի՞նչ լուսաւորութիւն էր ծագեցաւ :

ՄԻՒՍՆԵՐ

— Լուսեղէն հոգիներ կ'երեւին :

ՆԵՐՇԱՊՈՒՀ

Եւ ահա՛ վարդան

ԲՈԼՈՐԸ ՄԷԿՏԵՂ

Ահա՛ մեր վարդան և

Խորէն .

Արտակ .

Վահան .

Հմայեակ .

Ներսէհ .

Տաճատ .

Արսէն .

Գարեգին .

ՆԵՐՇԱՊՈՒՀ

Եւ իրենց առջեւ լուսեղէն հրեշտակներ պար բռնած , և իրենց գլուխ լուսեղէն պսակներով պսակուած : Իսկ այն ո՞վ է որ արիւնաթաթախ և լուսաթաթախ կարմիր և ճերմակ հագած և իբրեւ փեսայ հանդիսի մէջ առած կը տանին յառագաստ . . . : Այդ կերպորանքը Հմայեկին է նման . աչքերը պայծառ բացավառ , բազուկն երկայն , կուրծք բացալանջ , ճակատը լայն . և ձայն վարդանայ «Եղբա՛յր» կը կանչէ , «Եղբա՛յր Հմայեակ» ահա՛ կը կանչէ : Չայն ամենեցուն Հայաստան կը կանչեն , Հայոց լեռներուն Ողջոյն կը գոչեն :

Հմայեակն է այն որ պսակուեցաւ ,
Հմայեակ գնաց Վարդանին հասաւ :

.....



Ո Ղ Բ Ե Ր Գ

Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լուեր են,
Երկնից թող գան անմահ հողիք
Հայոց քաջեր պսակել:

Մասեաց գագաթ թող գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր 'ի Հայաստան
Հայոց արիւն հոտոտել:

Փախէ՛ք ամպեր Շաւարշանէն,
Աւ մի՛ ցօղէք ձեր ցօղեր .
Շաւարշանը ուռգուած է
Հայոց քաջաց արիւնէն:

Եւ կը ծըլին և կը ծընին
Այս դաշտին մէջ ոչ խոտ, վարդ .
Այլ վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ քաջ Եղիշէն
Գրիչ 'ի ձեռն գայ յԱրտագ,
Չափէ ձեւէ, գրէ դրոշմէ,
Կեանք, մահ, հաւատք վարդանանց:

Ա՛հ, վարդանայ անուան արժան
Մասիս կանգնի մահարձան .
Մենաստաններ խաչն 'ի դմբէթ
Աւետարան սուրբ տաճար :

Մագէ՛ արեւ քոյղ ճառագայթ
Խաղտեաց լեռներ, մութ խորչեր .
Այն տեղ ինկաւ քաջ Հմայեակ,
Այն տեղ պառկեր նահատակ :

Լուսին, լուսին, աչքովդ անքուն,
Պահէ՛ Հայոց ոսկորներ .
Եւ Մայիսի զուարթ ցօղով
Յօղէ՛ անոնց շիրիմներ :

Արծուիք, բապէք Հայաստանին
Եւ արադիլ ամրան հիւր .
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց սուն :

Մոխիրներուն վրայ նստէք,
Աւերակները շինէք բոյն,
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ
Մինչեւ Հայոց դայ գարուն :

